

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ
**ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ՝
 ՎԱՂՈՒԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

ՏՕԳՔ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Չկայ ընկերային ոչ մէկ միաւոր, կառոյց, հասարակական համակարգ՝ ըլլայ ընտանեկան, մշակութային, միութեանական, հոգեւորական, ընկերա-ֆառական կամ պետական՝ որ սրտի առած չըլլայ, մտահոգուած չըլլայ, տուայտած չըլլայ՝ ի տես արդի նոր սերունդներու դրսեւորած եւ դիմագրած բազմաբնոյթ տխուր տագնապներուն:

Արդի երիտասարդութիւնը - բացառութիւնները յարգելի - արդի ժամանակներու, ընդհանրապէս կեանքի դժուարին, այլապէս յուսահատեցուցիչ պայմաններու տակ, իր անհին առաջնորդութիւնը յանձնած կը բուռն ըլլայ հեշտատատ, դիւրամտեցիչ ու հրապուրիչ պատահականութեան փայլներուն:

Անոր մէջ կը տիրէ Կրաւորականութիւնը, որ կը գործէ իր չարիքն ու աւերը ոչ միայն առանձնապէս ենթակային, այլ ընդհանրապէս, նաեւ ազգային հասարակականութիւններու կեանքէն ներս:

Այս ժխտական հոգեբանութիւնը իր տխուր եւ շոնդալից անդրադարձը ձգած է ուրիշներու կարգին, նաեւ մեր երիտասարդութեան ազգային ձգտումներուն վրայ: Անգամ եթէ մեր երիտասարդութիւնը ունի այդ ձգտումները համոզիչ չեն եւ ան ի վիճակի չէ դրսեւորելու զանոնք, ժամանցուած գտնելով: Գահավէժ ընթացքի մէջ են անոնք: Ոչ մէկ հետաքրքրութիւն ունին մեր ազգային, ընկերային ու քարոյական անդրադարձ արժանիքներուն մասին: Ահա թէ ինչն ազգային հրապարակի վրայ տակաւ կը նուազի մեր մարդու ժը, գործուն ու ժը: Մեկնողին տեղը լեցնող չկայ: Չկան երիտասարդ գրիչներ, երիտասարդ ուսուցիչներ, խմբագիրներ, դեկավարներ՝ հակառակ անոր որ մեր հայկական վարժարաններէն բաւական մեծ թիւով շրջանաւարտներ կը հայրաքայտուին գաղութիս: Անոնց, այդ շրջանաւարտներուն, վերջին անգամ կը հանդիպիմ վկայականաբաշխման օրը, բեմին վրայ, ապա բնաւ չի հանդիպելու համար ազգային թատերաբեմէն ներս, ուր այնքան պէտք ունին անոնց գործուն մասնակցութեան:

Այս բոլորը կու գան այս անգամ բացայայտել այլ մտահոգութիւն մը. կասկածի առարկայ դարձնելով մեր գոյութեան պահպանումը: Տարիներ սահմանելու փորձութեան կ'ենթարկուին: Հարցադրումներ կը կատարենք, «ի՞նչ պէտք կայ» ներքին երկար շարք մը, որ կ'ընդգրկէ ակուսի, դպրոց, եկեղեցի, գիր ու գրականութիւն, մշակոյթ, շարք՝ որուն բացասական թելադրականութիւնը կրնայ անշար-

Շաբ.ը էջ 4

ՄԱՅԻՍ 12-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒՄԻ ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ ՍԿԱԾ ԵՆ ԺԱՄԱՆԵԼ ԶԱՅԱՍՏԱՆ



Տեսարան մը Վարդան Օսկանեանի եւ դեսպան Պորիս Ֆրլեցի հանդիպումէն

Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւններուն հետեւելու նպատակով, երկարաժամկէտ դիտորդական խումբերը սկսած են ժամանել Հայաստան:

Մարտ 19-ին Երեւանի մէջ բացուած է ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատութիւններու եւ մարդու իրաւունքներու գրասենեակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) կենտրոնատեղին: Երեւան ժամանած են ԵԱՀԿ-ի դիտորդական առաքելութեան 20 հոգինոց առաջին խումբը: 12 երկիրներէ ժամանած դիտորդներու խումբը կը ղեկավարուի Սլովենիայի նախկին արտաքին գործոց նախարար Պորիս Ֆրլեցի կողմէ: Պատուիրակութեան կազմին մէջ են Լատվիայի, Գերմանիոյ, Ուքրաինոյ, Միացեալ Նահանգներու, Վրաստանի, Սլովակիայի եւ այլ երկրներու ներկայացուցիչներ:

Մարտի վերջերուն դիտորդները պիտի սկսին հետեւելու հայաստանեան լրատուամիջոցներու կողմէ ընտրութիւններու լուսաբանման հսկողութիւնը, որ պիտի կատարուի միայն արտասահմանցի մասնագէտներու կողմէ:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, Մարտ 20-ին ընդունած է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելութեան ղեկավար, դեսպան Պորիս Ֆրլեցին:

Պրն. Ֆրլեց տեղեկացուցած է, որ դիտորդական առաքելութիւնը Շաբ.ը էջ 4

ԻՐԱՆ-ԶԱՅԱՍՏԱՆ ԳԱԶԱՍՈՒՂԻ ԲԱՑՈՒՄԸ

Երկուշաբթի, Մարտ 19-ին Ռոբերդ Քոչարեան ու իրանի նախագահ Մահմուտ Ահմատինեան կատարեցին պաշտօնական բացումը՝ իրան-Հայաստան գազատարի 40 քիլոմետրանոց առաջին հատուածին:

Բացման Արարողութիւնը տեղի ունեցած է Մեղրիի հատուածի մէջ: Հայկական պատուիրակութիւնը Ռոբերդ Քոչարեանի գլխավորութեամբ, Մեղրիի մաքսակէտը ժամանելով շուրջ 4 ժամ սպասած են իրանի նախագահին: Եղանակային վատ պայմաններու պատճառով, Ահմատինեան ժամանած է ոչ թէ ուղղաթիւով, ինչպէս նախապէս որոշուած էր, այլ՝ ինքնաշարժով:

Բացման համար յատուկ պատրաստուած էր ջահ: Ռոբերդ Քոչարեան եւ Մահմուտ Ահմատինեան իրան - Հայաստան գազատարի պաշտօնական բացումը կատարեցին՝ վառելով խորհրդանշական ջահը:

Իրան-Հայաստան գազամուղի հզորութիւնը տարեկան 1,2 միլիարդ խորանարդ մեթր է: Գազատարի ամբողջական կառուցումը դեռ աւարտած չէ: Մեղրի-Քաջարան 40 քիլոմետրանոց հատուածը կառուցելու համար Հայաստանին անհրաժեշտ էր ծախսել 35 միլիոն տոլար: Այդ գումարի 80 տոկոսը տրամադրած է իրանի զարգացման դրամատունը:

ԿԱՇԱՌՔ ՊԱՅԱՆՁԵԼՈՒ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՄԸ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՏԻ ՏՈՒԱԾ Է ԶԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի մէջ ոսկիի արդիւնահանման գործով զբաղուող Global Gold ամերիկեան ընկերութիւնը դիմած է Ներդրումային վէճերու միջազգային կեդրոն՝ Հայաստանի կառավարութեան հետ իր ունեցած վէճի շուրջ վճիռ կայացնելու պահանջով:

«Մենք Հայաստանի կառավարութեան դէմ հայց ներկայացնելու համար մի քանի հիմնաւորումներ ունինք», - «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է ընկերութեան փաստաբաններէն Քէն Ֆլեյթսը, չեչտելով, որ «Հայաստանի կառավարութիւնը կը խոչընդոտէ Global Gold ընկերութեան գործունէութիւնը, մերժելով երկարաձգել հանքերու շահագործման արտոնագիրը»:

Փաստաբանը աւելցուցած է որ, Հայաստանի բնապահպանութեան նախարար Վարդան Այվազ-

Շաբ.ը էջ 4

« ԶԱԶԱՐԱՄԵԱԿԻ ՄԱՐՏԱՅՐԱՒԵՐՆԵՐ » ԾՐԱԳԻՐԸ ԿՐՆԱՅ ՎՏԱՆԳՈՒԻԼ ԵԹԷ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՍԷՋ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ՉՈՒՆԵՆԱՆ

«Հազարամեակի մարտահրաւէրներ» ընկերակցութեան գործադիր տնօրէն Ճոն Դանիլովիչ Ամերիկեան Գոնկրէսի առջեւ ելոյթ ունենալով յայտարարած է որ, Հայաստանին յատկացուող օգնութեան ծրագիրը կրնայ սառեցուցիչ, եթէ այդ երկրէն ներս «աղաղակող բան տեղի ունենայ»:

«Եթէ ինչ-որ աղաղակող բան պատահի՝ ըսենք, ընտրութիւնները չկայանան, արգիլուին՝ ոչ թէ յետաձգուին, այլ արգիլուին, այդ պարագային գործադրութեան կը դրուի օգնութիւնը սառեցնելու յօդուածը», - ըսած է Դանիլովիչ, Ներկայացուցիչներու Տան մէկ յանձնախումբի լուսամբերու ընթացքին:

«Յոյս ունիմ, որ նման խնդիր մօտ ապագային չի ծագիր: Մէկ

ամիս առաջ ես խօսած եմ այդ մասին Քոչարեանի հետ», - ըսած է Դանիլովիչ:

Պատասխանելով Հայկական հարցերու յանձնախումբի համանախագահ, Գոնկրէսիական Զօ Նոլենպըրկի այն հարցին, թէ արդեօք ակնյայտ ձախողութեան պարագային կարելի է ետ վերցնել Հայաստանին արդէն տրամադրուած գումարը, Դանիլովիչ ըսած է. - «Գումարը ետ վերցնելու արարողակարգ չէ նախատեսուած, անմիջապէս որ գումարը մեր ծրագիրով կը յատկացուի, այն կը ծախսուի»:

Նախագահ Ճորճ Պուշ դիմած է Գոնկրէսին 2008 տարուայ պիւտոճէին մէջ «Հազարամեակի մարտահրաւէրներ» ծրագիրին տրամադրել 3 միլիար տոլար:

ԲԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ «ՄՏՆՈՒՄ» Է ԲՈՉԱՐԵԱՆԻՉՄԻ ՄԷՋ

Հայաստանում սկիզբ առած նախընտրական իրավիճակը բաւականին տարօրինակ դրսևորումներ ունի: Մեր երկրում ընտրապայքարը ծաւալուած է ոչ թէ իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ, այլ իշխանութիւն-իշխանութիւն դաշտում: Այս բացառիկութեան մասին խօսելիս ՀՀ նախկին փոխվարչապետ Վահան Շիրիսանեանն ասաց, թէ չի բացառուած այդ պայքարի արդիւնքում նոյնիսկ իշխանափոխութիւն լինի մեր երկրում: «7 տարի երկիրը եւ հասարակութիւնը անընդհատ համատեղ ջանքերով քայքայող դաշնակները եւ հանրապետականները ընտրութիւնների նախօրէին մրցակից են դառնում եւ իշխանափոխութեան անհրաժեշտութիւն քարոզում»,- բացատրեց անկուսակցական Վ. Շիրիսանեանը՝ մէջբերելով Զիվանու խօսքերը՝ «խելքին աչեցէք»:

Մեր գրուցակցի մատուցմամբ, հայրենի իշխանութիւնները փորձում են աշխարհին ապացուցել, թէ իրենք այնքան լաւ են աշխատել, որ երկրում ընդդիմութիւն չկայ ու իշխանական կուսակցութիւնների պայքարը ծաւալուած է ոչ թէ գաղափարախօսութիւնների, այլ քաղաքական նպատակայարմարութեան շուրջ: Այսինքն՝ թէ ով աւելի լաւ կը շարունակի «Թալանի եւ Քոչարեանին էլ աւելի ստրկամտօրէն ծառայելու գործը»: Եւ ով ժողովրդին աւելի լաւ կը համոզի, որ ընտրակեղծիքներ չեն լինելու: Իսկ ընտրակեղծիքների բացառումը իշխանական ուժերը մեկնաբանում են հետեւեալ տեսանկիւնից. «անհար է պատկերացնել, թէ ինչպէս է ՀՀԿ-ն գորանալու ԲՀԿ-ի կամ ՀՅԳ-ի ձայները»: Բայց այս ամէնում ամենավտանգաւորն, ըստ ՀՀ պաշտպանութեան նախկին փոխնախարարի, այն է, որ այս մանիպուլացիաները կարող են իշխանութիւնների համար ցանկալի արդիւնք ապահովել, եթէ «այսօր իրական ընդդիմադիր «Հանրապետութիւն», «Ժառանգութիւն» կուսակցութիւնները, «Այլընտրանք» եւ «Քաղաքացիական անհնազանդութիւն» շարժումները չձեւաւորեն միասնական դիմադրութեան ճակատ եւ համախմբուելով չփորձեն հալութեանը, երկիրն ազատել այս միջաւանից»: Ընդդիմադիր գործչի կանխատեսմամբ, այս ծրագիրը նոյնիսկ առաջիկայ երկու նախընտրական ամիսների ընթացքում է հնարաւոր իրականացնել:

Բայց խօսելով նախընտրական ժամանակաշրջանի մասին, Վահան Շիրիսանեանն ամենեւին էլ հակուած չէ կարծել, որ մեր երկրում Մայիսին ընտրութիւններ են տեղի ունենալու, քանի որ ընտրական համակարգը արդէն իսկ ջախջախուած է եւ ջախջախուած է հենց նոյն իշխանութիւնների ձեռքով՝ քաղաքական նպատակայարմարութիւնից ելնելով: Այստեղ պրն Շիրիսանեանը հարկ համարեց յիշեցնել, որ «մինչ այս ֆարսի էին վերածուած Հոկտեմբերի 27-ի դատավարութիւնը, 2003-ի ընտրութիւնները, 2005-ի հանրաքուէն, ձեռքի հետ կազմակերպուած էր Ապրիլի 12-ը: Բոլոր հիմնովին կեղծուած ընտրութիւնները թեթեւ կշտամբանքով վաւերացուած, լեզիտիմացուած են եւրոկառուցների, ՌԴ-ի, ԱՄՆ-ի կողմից: Ծարուակաւուած է հայ հասարակութեան քայքայման, ոգեզրկման ծրագրի իրականացումը եթէերում, ԲՈՒՀ-երում, դպրոցներում, ընտանիքներում, փողոցներ-

րում: Եւ յանկարծ վերջին մէկերկու ամսում Հայաստանի գլխին նոյն կառուցներում սկսում են ծանր պոպոքներ ջարդել»:

Պոպոքներ ասելով Վահան Շիրիսանեանը նկատի ունի այն, որ, օրինակ, Հարաւային Կովկասում Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին յայտարարել է, թէ «Եւրամիութիւնը ողջունում է Կարս-Թբիլիսի-Պաքու երկաթուղային նախագիծը»: Ու թէեւ ԵՄ-ն չի մասնակցում այդ նախագիծին, այնուամենայնիւ բարձր է գնահատում այն՝ որպէս տարածաշրջանային ինտեգրացիայի օրինակ: Յաջորդ պոպոքը, մեր երկրի գլխին կոտրել է ՌԴ ԱԳ նախարար Ի. Լեւիտինը՝ դժգոհելով «Գոյք պարտքի դիմաց» ծրագրի իրականացման հետեւանքով ՌԴ-ին անցած ձեռնարկութիւնների «անաշխատունակութիւնից», որը գլուխ է բարձրացրել պատուերներին սակաւութեան հետեւանքով: Պոպոքների շարքը լրացնում է նաեւ ԱՄՆ պետդեպարտամենտի 2006-ի գեկոյցը, ուր նշուած է, թէ «Հայաստանը շարունակում է օկուպացուած պահել Ատրպէյճանի տարածքները՝ Լեռնային Ղարաբաղն ու 7 շրջանները»: Նոյն գեկոյցում նշուած է նաեւ, որ «օրինակ, վարչապետի գլխաւորած հակակոռուպցիոն խորհուրդը տարուայ ընթացքում միայն 2 անգամ է նիստ արել՝ ոտնահարելով իր կանոնադրութիւնը, իսկ այս խորհրդի կողմից հիմնուած մոնիտորինգային յանձնաժողովն ընդհանրապէս ոչ մի նիստ չի արել»:

Սրանք պոպոքների մասով, իսկ Հայաստանի աշխարհում ունեցած դերի ու նշանակութեան մասով պրն Շիրիսանեանը աւելի դիպուկ օրինակով բացատրեց՝ «Հայաստանը միջազգային կեանքում վերածուել է մանրադրամի, որը ԱՄՆ-ն, Եւրոպան, ՌԴ-ն օգտագործում են թուրքիայի, Վրաստանի, Ատրպէյճանի, Իրանի հետ իրենց ազգային շահերից բխող խնդիրները լուծելու համար»: Ու սա, ըստ «ԶԻ» գրուցակցի, շարունակուելու է այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանում իշխում են ժողովրդի կողմից չընտրուած, մերժուած մարդիկ: Եւ եթէ նրա կողմից իշխատակուած ընդդիմադիր ուժերը միասնական ճակատ կազմելու որոշում չկապացնեն, «2007-ի եւ 2008-ի ընտրութիւնների լեյտմոտիվը լինելու է բացառապէս իշխանական մտրուել օգտուելու ներքին պայքարը եւ արտաքին հովանաւորի ցանկացած պահանջ կատարելու պատրաստակամութիւնը»:

Վահան Շիրիսանեանն ընդգծեց, որ այս վիճակին մեր երկիրը հասել է «Հոկտեմբերի 27-ի» ներքին ու արտաքին հովանաւորեալների 7-ամեայ քրտնաջան աշխատանքի արդիւնքում: Մարդը կարող է լինել կամ քաղաքացի, կամ ստրուկ: «Քոչարեանից զոյատեւում է միայն ստրուկների միջավայրում: Հայ մարդը պարտաւոր է վերահաստատել հպարտ, ազատ, արժանապատիւ քաղաքացու 1988-1991 թուականների իր հոգեվիճակը՝ յանուն իր գաւակներին, յանուն Հայաստանի», - շարունակեց Վ. Շիրիսանեանը՝ բացատրելով, որ Սերժ Սարգսեանը մտնում է «քոչարեանից մէջ»:

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍԵԱՆ «ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ԹԱՄԻԲ ՉՈՒՆԵՆ, ԷԼԻ

ԱՄՆ պետքարտուղարութեան բարձրաստիճան պաշտօնեաները շարունակում են ԱՄՆ Կոնգրեսի հետ բանակցութիւններ վարել Ներկայացուցիչների պալատում ներկայացուած Հայոց Յեղասպանութիւնը ճանաչող թիւ 106 բանաձեւի շուրջ:

Նախօրէին, ինչպէս յայտնի է, ԱՄՆ-ի պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը եւ պաշտպանութեան նախարար Ռոբերտ Գեյթսը նամակներ էին յղել Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խօսնակ Նենսի Փելտիին կոչ անելով չընդունել Հայոց Յեղասպանութիւնը ճանաչող բանաձեւը: Իսկ ահա նախօրէին նոյն այդ կոչով հանդէս է եկել ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Դենիել Ֆրիդը: Վերջինս մասնակցել է Ներկայացուցիչների պալատի արտաքին գործերի յանձնաժողովի Եւրոպայի հարցերով ենթախանձնաժողովում անցկացուած լսումներին, եւ ինչպէս Կոնդոլիզա Ռայսն ու Ռոբերտ Գեյթսը՝ իրենց նամակում, իր ելույթում յայտարարել է, որ նշեալ բանաձեւի ընդունումը կը վնասի թուրք-ամերիկեան յարաբերութիւններին: Դենիել Ֆրիդը, սակայն, չի բաւարարուել միայն կոչով եւ վերոնշեալ պնդումով, այլ նաեւ մի շարք փաստեր է ներկայացրել, որոնք կոնգրեսականներին պէտք է ետ պահեն ցեղասպանութեան բանաձեւի օգտին քուէարկելուց:

Նախ ԱՄՆ պետքարտուղարը կոնգրեսականների ուշադրութիւնն է գրաւել այն փաստի վրայ, որ եթէ ԱՄՆ Կոնգրեսն ընդունի Հայոց Յեղասպանութիւնը ճանաչող բանաձեւը, հնարաւոր է, որ թուրքիան դրան պատասխանի իր «Ինջիրիլի» ռազմաբազան ամերիկեան զորքերի առաջ փակելով:

Միւս կողմից՝ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալը համոզմունք է յայտնել, որ նշեալ բանաձեւի ընդունումը լուրջ վնաս կը հասցնի նաեւ Հայաստանի եւ թուրքիայի միջեւ յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած ջանքերին: Ինչ վերաբերում է ցեղասպանութեան հարցում ԱՄՆ վարչակազմի քաղաքականութեանը, ապա Ֆրիդը եւս մէկ անգամ կրկնել է այն, սակայն իր ձեւակերպումներում հայկական կողմին ուղղուած որոշակի պնդում է արել՝ մասնաւորապէս տեղի ունեցածը նկարագրելով որպէս էթնիկ գտումներ: «ԱՄՆ վարչակազմը երբեք չի ժխտել, հարցականի տակ չի դրել եւ չի նուազեցրել հայերի զանգուածային սպանութիւնների եւ այդ էթնիկական գտման պատմական փաստերը: Իւրաքանչիւր տարի Ապրիլի 24-ին՝ Հայերի իշխատակի օրը, ԱՄՆ նախագահը հանդէս է գալիս յայտարարութեամբ», - ասել է նա եւ աւելացրել, որ ԱՄՆ-ի նպատակն է «խթանել թուրքիայի հասարակութեան կողմից այդ սարսափելի դէպքերի անկեղծ ուսումնասիրութիւնը եւ օգնել, որպէսզի թուրքիան հաշտուի իր անցեալի եւ Հայաստանի հետ»: Իսկ որ նման հեռանկարը միանգամայն իրական է, ըստ Դենիել Ֆրիդի, ցոյց է տալիս Հրանդ Դինքի սպանութիւնից յետոյ թուրքիայում ստեղծուած իրավիճակը, մասնաւորապէս այն, որ թուրքիայի աւելի քան 100 հազար քաղաքացիներ մասնակցեցին Դինքի յուղարկաւորութեանը. «Քաղաքական ամբողջ ապեկտորի քաղաքական առաջնորդները, այդ թւում՝ նախագահը, վարչապետը եւ գլխաւոր շտաբի պետը, դատաւարուներին այդ սպանութիւնը», - ասել է Ֆրիդը, որը նաեւ

ողջունել է թուրքիայի քրէական օրէնագրքի 301 յօդուածը փոփոխելու անհրաժեշտութեան մասին թուրքական իշխանութիւնների յայտարարութիւնները:

Մի խօսքով, այսօր արդէն կարելի է վստահ լինել, որ Ներկայացուցիչների պալատում, իսկ օրեր առաջ նաեւ Սենատում ներկայացուած Հայոց Յեղասպանութեան ճանաչման մասին բանաձեւի դէմ իրենց պայքարում թուրքիայի իշխանութիւնները միայնակ չեն, եւ ինչպէս ամիսներ առաջ յայտարարել էր ԱՄՆ պետքարտուղարութեան խօսնակը՝ նախագահի վարչակազմը նոյնպէս այս հարցում ակտիվօրէն աշխատում է Կոնգրեսի հետ: Պէտք է արձանագրել նաեւ, որ այս առումով, փաստօրէն, ապարդիւն են անցել ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանի ջանքերը, որ նա գործադրեց վերջերս վաշինգտոն կատարած իր այցի ընթացքում: Այդ ժամանակ առաջին անգամ Օսկանեանը յայտարարեց, որ Հայաստանը նոյնպէս պետական մակարդակով միջամտում է վաշինգտոնում կատարուող իրադարձութիւններին, իսկ որպէս սրա ապացոյց յայտարարուեց, որ Օսկանեանը ցեղասպանութեան հարցը քննարկել է ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հետ իր հանդիպման ժամանակ: Իսկ ահա «Ատլիէթիկ ֆրես» գործակալութեանը տուած հարցազրույցում Օսկանեանը նոյնիսկ փորձել էր թասիբի գցել ԱՄՆ գործող վարչակազմին՝ յայտարարելով, թէ այժմ թուրքերը ուղեւորում են՝ պատժելու Միացեալ Նահանգներին, եթէ ԱՄՆ-ի Կոնգրեսը համարձակուի բարձրաձայնել ցեղասպանութեան մասին: Փաստօրէն, այս յայտարարութիւնից ԱՄՆ պաշտօնեաները բոլորովին չեն սպաւորուել:

ԱՆՆԱ Վ. ՅԱԿՈՒԲԱՆ «ՀԱՅՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՏՈՒՄԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԸՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՍԲԱԳԻՐ՝ ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝ ՍԱՂԱԿ ԹՈՒԹԵԱՆ ԿԱԶՔԵՆ ԽՈՍԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ Դեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797- 6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail) All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

**ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏՈ ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ
ՆԱԽՆՏՐԱԿԱՆ ԼԱՐՈՒԱԾՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Այս տարի նախորդ տարու աշնան ժամանակահատվածի համեմատ 12,5 տոկոս ան է գրանցուել լանցագործությունների ոլորտում: Կատարուած լանցագործությունների ընդհանուր թիվը 659 է: Երեւանի քաղաքի ոստիկանության վարչության պետ Ներսէս Նազարեանը փաստում է, որ սա խօսում է ոչ թէ կրիմինալոգիայի վիճակի բարդանալու մասին, այլ լանցագործությունների յայտնաբերման եւ կատարուած լանցագործությունների առաւել լիարժէք գրանցման հետեւողական քաղաքականության մասին:



Երեւանի քաղաքի ոստիկանութեան վարչութեան պետ Ներսէս Նազարեան

Միայն երեք ամիսների ընթացքում մայրաքաղաքում կատարուել է 6 դիտարկում սպանությունների նախորդ տարու աշնան դիմաց: Ըստ Ներսէս Նազարեանի, դրանցից 4-ը բացայայտուել է: Մեծ հնչեղություն գտած «Ռեյքս» դիսկո ակումբում երկու մարդու հրազենով սպանությունը բացայայտուած է:

ներ չեն եղել եւ դրանց թիւը նուազել է 40 տոկոսով: Ներսէս Նազարեանը չի բացառում, որ նախընտրական ժամանակաշրջանում կարող են լինել վիճաբանություններ, հակասություններ: Նման դէպք է արձանագրուել Մարտի 15-ին էրեբունի համայնքում ԲՀԿ եւ ՀՀԿ ներկայացուցիչների միջեւ:

«Բոլոր մասնակիցները յայտնի են, այժմ փախուստի մէջ է կատարողը եւ հնարաւոր է կարճ ժամանակում գտնենք», - ասաց վարչության պետը: Պարզուած է, որ «Ռեյքս» դիսկո ակումբի վիճաբանությունները ակունքները գալիս են Մոսկուայից. «Երկուսն անընդհատ վիճաբանություններ են ունեցել: Մահացողը սպանությունից մէկ շաբաթ առաջ է վերադարձել, նույնը՝ կատարողը:

Չնայած տարբեր ՁԼՄ-ներ կարծիք էին տարածել, թէ մեծ ծեծկռտուք է տեղի ունեցել՝ ԲՀԿ տարածքային կառուցի ղեկավար Յարուսթիան Կարապետեանին ծեծի է ենթարկել էրեբունի համայնքի ղեկավար Մհեր Սեդրակեանը եւ նրա համախոհները, բայց ոստիկանության պետը նշեց, թէ դա ոչ թէ ծեծկռտուք, այլ վիճաբանությունների անուաններ:

«Ցաւալի է, որ վիճաբանությունն աւարտը այստեղ եղաւ»: Ոստիկանությունը յաճախ է հասարակության կողմից դժգոհություններ լսում ակումբների վերաբերեալ. «Այն ակումբները, որոնք չեն կարողանում ապահովել իրենց նորմալ հանգստի վայրերը, եւ իրենք կը գրկուեն իրենց գիշերային լիցենզիաներից»:

«Մեր աշխատանքը միայն չի կայանում նրանում, որ փոքր իսկ դէպքից մարդուն քրէական պատասխանատուութեան ենթարկենք: Մենք որոշում կայացրեցինք, որ այդ երիտասարդները, որոնք վիճաբանել էին, ինչ որ տարբեր կարծիքներ ունեն ընտրությունների հետ կապուած, սակայն նրանք նոյն տարածքից են, ընկերներ են եւ մենք կարողացանք թեթեւ վիճաբանություններ հարթել»:

Երեւան քաղաքի ոստիկանության վարչության պետը ուրախութեամբ է յաւելում, որ հրազենով կատարուած այլ սպանություններ:

«ԿԸՅ-Ն ՆԿԱՐԵԼՈՒ Է 1 ՄԻԼԻՈՆ 700 ՀԱԶԱՐ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ամէն ամիս մաքսանենգ ճանապարհով Մաքսային ծառայությունում կուտակուած է 6 միլիոն տոլար, որը բաժանուած է մի քանի իշխանաւորների միջեւ», - Մարտ 19-ի իր հերթական բացայայտումն արեց «Նոր ժամանակներ» կուսակցության ղեկավար Արամ Կարապետեանը: Նա վստահ է, որ այս գումարներն ուղղուելու են նաեւ առաջիկայ ընտրությունները կեղծելուն:

թիւը»: Արամ Կարապետեանն այն կարծիքին է, որ պայքարը, որն ամենեւին ընտրական չէ, ընթանում է եւ ընթանալու է միայն իշխանական երկու ուժերի՝ ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի միջեւ. «ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի միջեւ տեղի ունեցած բախման արդիւնքում այսօր 7 հոգի գտնուած են ԱԱԾ մեկուսարանում, սակայն հանրությանը որեւէ տեղեկատուություն չի տրամադրուած այդ մասին: Արամ Կարապետեանը ՀՀԿ-ԲՀԿ պայքարի արդիւնք է համարում նաեւ օրերս Գիւմրիում ՀՀԿ-ի կողմից որոշ բնակիչներին բնակարաններ նուիրելը. «Վարչապետին որտեղից այնքան գումար, որ բնակարաններ է նուիրում: Եթէ Գաղիկ Մառուկեանը ժամանակին հարկեր վճարեր, ապա այդքան հարուստ չէր լինի եւ այսօր էլ ի վիճակի չէր լինի «բարեգործական» կուսակցություն ստեղծել»:


«ՀՀ իշխանությունները ցանկանում են վերջնականապէս թաղել «ընտրություններ» գաղափարը: Հենց այս պահին Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, էրեբունի համայնքներում Բարգաւած Հայաստանն ու ՀՀԿ-ն շարունակում են անձնագրերի հաւաքման, դրամ բաժանելու գործընթացը», - ասաց զանգեց Արամ Կարապետեանը: Նա համոզուած է, որ իշխանությունները կեղծելու են նաեւ Մայիսի 12-ի խորհրդարանի ընտրությունները, եւ նոյնիսկ նշեց այն թիւը, որ պատրաստուած է նկարել ԿԸՅ-ն. «Իմ ունեցած տուեալներով ԿԸՅ-ն նկարելու է, որ ընտրություններին մասնակցել է 1 միլիոն 700 հազար մարդ: Իսկ ընտրությունները կեղծելուն արդէն լծուել են Վիգաների վարչությունը եւ Ոստիկանու-

թիւը»: Արամ Կարապետեանն այն կարծիքին է, որ պայքարը, որն ամենեւին ընտրական չէ, ընթանում է եւ ընթանալու է միայն իշխանական երկու ուժերի՝ ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի միջեւ. «ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի միջեւ տեղի ունեցած բախման արդիւնքում այսօր 7 հոգի գտնուած են ԱԱԾ մեկուսարանում, սակայն հանրությանը որեւէ տեղեկատուություն չի տրամադրուած այդ մասին: Արամ Կարապետեանը ՀՀԿ-ԲՀԿ պայքարի արդիւնք է համարում նաեւ օրերս Գիւմրիում ՀՀԿ-ի կողմից որոշ բնակիչներին բնակարաններ նուիրելը. «Վարչապետին որտեղից այնքան գումար, որ բնակարաններ է նուիրում: Եթէ Գաղիկ Մառուկեանը ժամանակին հարկեր վճարեր, ապա այդքան հարուստ չէր լինի եւ այսօր էլ ի վիճակի չէր լինի «բարեգործական» կուսակցություն ստեղծել»:

Ընդդիմութեան միաւորուելու դէպքում, Արամ Կարապետեանի կարծիքով յաղթանակը միանգամից կ'ապահովուէր, սակայն այս իրավիճակում էլ նա չի յուսահատուում. «Քաղաքականութեան մէջ ողբերգություններ չկան: Այս իրավիճակը հնարաւոր է փոխել միայն ժողովրդին փողոց դուրս բերելով:

ՀՀՇ-Ն ՅԱՒԱԿՆՈՒՄ Է 20 ՏՈԿՈՍ ՁԱՅՆԻ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՀՀՇ վարչության անդամ Արամ Մանուկեանի համոզմամբ, առաջիկայ խորհրդարանական ընտրություններին, նոյնիսկ այսպիսի ճնշումների պարագայում ՀՀՇ-ն կը հաւաքի 20 տոկոս ձայն, իսկ նուազագոյնն, ըստ Մանուկեանի՝ 10 տոկոս: Արամ Մանուկեանի գնահատմամբ, այսօր հասարակութեան մէջ առկայ է ՀՀՇ-ի հանդէպ բացասական վերաբերմունք:



ՀՀՇ վարչութեան անդամ Արամ Մանուկեան

ՀՀՇ-ն ընտրություններին կը գնա «Բաց սահմաններ, մշտական խաղաղություն եւ ինտեգրացիա» բովանդակութեամբ կարգախօսներով: Իսկ ՀՀՇ-ի հիմնական խնդիրն այն է, որ վերադարձնեն ժողովրդին ընտրելու իրաւունքը: Պարոն Մանուկեանը վստահ է, որ ՀՀՇ-ի կողմից է ոչ միայն առաջադէմ երիտասարդությունը, այլեւ թոշակաւորների մի մասը, ովքեր հասկանում են, որ անհրաժեշտ է խաղաղություն եւ բաց սահմաններ, եւրոինտեգրացիա:

ոճով: «Պարպուած ու կանթեղուած այնքան էներգիա կայ, որ մի օր ժայթքելու է», - կարծում է Արամ Մանուկեանը եւ նկատում, որ եթէ անգամ իշխանություններին մեծ ջանքերի գնով յաջողուի խորհրդարանը ձեւաւորել այնպէս, ինչպէս իրենք են ուզում, ապա այդ ԱԺ-ը չի հասցնի իր գործունէությունն աւարտել: Ու դրան նաեւ կը նպաստեն աշխարհաքաղաքական զարգացումները, պարոն Մանուկեանը նկատեց, որ վրաստանը ակտիւ ջանքերով գնում է դէպի ՆԱՏՕ, Իրանը մեղմում է ուրանի հարստացման ուղղութեամբ իր քայլերը, փոքրանում է տարածաշրջանում Ռուսաստանի դերակատարութիւնը եւ մեծանում ԱՄՆ-ինը: Մի խօսքով, Արամ Մանուկեանի հաստատ համոզմամբ, այս անգամ ոչ դուրսը, ոչ ներսը չեն հանդուրժելու առկայ որակի իշխանութիւնը:

Ի դէպ, պարոն Մանուկեանը տեղեկացրեց, որ այն ընտրատարածքներում, որտեղ իրենք ունեն մեծամասնական թեկնածու՝ իրենք աւելի մեծ ջանքեր ունեն, եւ այդ տեղամասերում հասարակությունը հակուած է ընտրել անհատ ՀՀՇականներին, քան կուսակցութեանը: ՀՀՇ-ն չի պատրաստուած թանկ քարոզարշաւ իրականացնել՝ պատատուներով, հոլովակներով ու ֆիլմերով. իրենք այցելելու են մարդկանց եւ յոյսը դնում են նրանց վրայ, որ իրենց էլ են ճանաչում, միաներին էլ. գործառութեանն ու կրիմինալին իրենք հակադրելու են գաղափարական պայքար:

Արամ Մանուկեանը նաեւ նկատեց ընտրական օրէնսգրքի այն բացմաթիւ խախտումներն ու կեղծիքները, որոնք այսօր արդէն առկայ են՝ անթաքուց գովազդային պատատուներ, հաղորդումներ, հոլովակներ, որոնք բացայայտ խախտում են: Բայց պարոն Մանուկեանը յատուկ կոնկրետացաւ երկքաղաքացիութեան մասին «սարսաղ» օրէնքի վրայ, որի ընդունմամբ մի լուրջ ընտրազանգուած՝ ՀՀ ղեսպանատներում գրկուած են ընտրելու հնարաւորութիւնից:

ՀՀՇ վարչության անդամ Արամ Մանուկեանն Երկուշաբթի, Մարտ 19-ին «Ուրբաթ» ակումբում կոչ արեց իշխանություններին զգուշօրէն պահպանել իրենց ունեցած 15-20 տոկոս առաւելագոյն ձայները. պարոն Մանուկեանը վստահաւոր ապագայ է կանխատեսում իշխանությունների համար: «Մայիսի 13-ին կը լինի ընտրությունների երկրորդ փուլը», - ընտրություններին յաջողող հնարաւոր գործողությունները բնութագրեց Արամ Մանուկեանն, ընդ որում, հասարակական ընդգլուցումն ու ըմբոստությունը առաջանալու են ոչ թէ ընդդիմադիր կուսակցությունների կազմակերպման արդիւնքում, այլ՝ ինքնաբերաբար: Իսկ դրան նպաստում են իշխանություններն իրենց գործելակերպով ու

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՕՍՆԱԿԸ ՉԻ ԽՈՍՏԱՆՈՒՄ ՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Կ'ԱՆՑՆԵՆ ԱՌԱՆՑ ԿԵՂԾԻՔՆԵՐԻ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:

Հայաստանի խորհրդարանի խօսնակ, Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) փոխնախագահ Տիգրան Թորոսեանը, յայտարարելով, որ առաջիկայ խորհրդարանական ընտրությունների ազատ եւ արդար անցկացումը բացառիկ նշանակութիւն ունի Հայաստանի համար, խուսափեց, այդուհանդերձ, պնդել, թէ ընտրությունները կ'անցնեն առանց խախտումների:

դամներից իւրաքանչիւրի գործողությունները կարող է վերահսկել: Կարծում եմ, որ ոչ: Եւ ես չեմ կարող բացառել, որ կարող է ինչ-որ մի բան լինել, որի մէջ կարող է ինչ-որ մի Հանրապետական կուսակցության անդամ մասնակից լինել»:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ հարցին, թէ վստահ է արդեօք, որ գոնէ իր կուսակիցները չեն կեղծի ընտրությունները, Թորոսեանը արձագանքեց. - «Հանրապետական կուսակցությունը ունի մի քանի տասնակի հազար անդամներ, եւ կարող է որեւէ մէկը ասել, յայտարարել, որ այդ մի քանի տասնակի հազարաւոր ան-

Թորոսեանը, ամէն դէպքում, խոստացաւ, որ եթէ խախտումների փորձեր լինեն (անկախ նրանից, թէ ում կողմից), ՀՀԿ-ն ամէն ինչ կ'անի, որպէսզի դրանք ընտրությունների վրայ ազդեցութիւն չունենան:

Դիտարկմանը, թէ, ըստ վերջերս անցկացուած հարցման, «Բարգաւած Հայաստան»-ը աւելի շատ ձայն կը ստանայ ընտրություններում, քան ՀՀԿ-ն, Թորոսեանը արձագանքեց, թէ դա «շատ մօտաւոր գնահատական է եւ իրական պատկերը չի կարող ներկայացնել»:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԵՒՍՈՒՏՔԸ ԿՐ ՃՆՇԻ, ԵԹԷ ԳԱԶԱՏԱՐԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Իրան-Հայաստանի գազատարի բացմամբ Հայաստանը ստանում է գազամատակարարման այլընտրանքային ուղի: Սակայն առաւել կարեւոր է, որ այդ գազամուղը դառնայ տարանցիկ: Ըստ Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցութեան կենտրոնի նախագահ, քաղաքագէտ Ստեփան Գրիգորեանի՝ Հայաստանը տարածաշրջանային այլ ծրագրերում ընդգրկուած է, իսկ Ատրպէյճանն ու Թուրքիան ամէն ինչ անում են, որ չընդգրկուի:



Մաս մը Իրան-Հայաստանի գազի խողովակէն

Ուստի սա միակ ելքն է, բայց. «Դժբախտաբար, մեր իշխանութիւնները բաւականին պասիւ են այսպիսի հարցերում: Զարգացումները գնում են այն ուղղութեամբ, որ, ի վերջոյ, մեր տարածաշրջանը հեռանում է Ռուսաստանից: Եւ Վրաստանի, եւ Ատրպէյճանի քաղաքականութիւնը դրան են բերում: Նոյն Ռուսաստանի կոշտ քաղաքականութիւնը բերում է նրան, որ մեր տարածաշրջանը հեռանում է իրենից: Ուստի մենք էլ մեր մասին պէտք է մտածենք: Այլընտրանքի մասին պէտք է մտածենք՝ չփչացնելով Ռուսաստանի հետ յարաբերութիւնները»:

Եթէ գազատարը չդառնայ տարանցիկ, ապա, ըստ քաղաքագէտի. «Պարզապէս դառնում են մի փոքր անկախ այն մոնոպոլիայից, որն ունի Ռուսաստանը մեր տարածաշրջանում եւ Հայաստանում»: Յիշեցնենք, որ Հայաստանի էներգետիկ հզօրութիւնների 80 տոկոսը գտնուում է Ռուսաստանի ձեռքում: «Հայուսգազարդը» նաեւ չի թաքցրել իր մտադրութիւնը՝ Իրան-Հայաստան գազամուղի հայկական հատուածի ձեռք բերման վերաբերեալ:

«Անթոյլատրելի է գազամուղի հայկական հատուածը տալ Ռուսաստանին ոչ թէ այն պատճառով, որ այն լաւ կամ վատ երկիր է: Եւ ոչ միայն նրա համար, որ էներգետիկ հզօրութիւնների մեծ մասը նրա ձեռքում է: Փորձը ցոյց է տուել, որ եթէ Ռուսաստանը վերցնում է այս կամ այն օբիեկտը, այն չի աշխատանքում: «Գոյք՝ պարտքի դիմաց» ծրագրով տրուած շատ օբիեկտներ չեն աշխատում», - նկատում է Ստեփան Գրիգորեանը:

Մանաւանդ, որ քաղաքագէտի կարծիքով, այսպիսի քայլերը ոչ միայն հարցականի տակ են դնում մեր էներգետիկ անվտանգութիւնը, այլև յարուցում են արեւմուտքի դժգոհութիւնը:

Դրանով է նա նաեւ բացատրում, վերջին շրջանում ԱՄՆ-ի դիրքորոշման կոշտացումը Հայաստանի նկատմամբ, օրինակ՝ հայկական հանքային ջրերի շուրջ առաջացած աղմուկը, Պետդպարտամենտի գեկոյցում Ղարաբաղը «օկուպացուած տարածք» ներկայացնելը: «Առաջին հերթին մեր իշխանութիւնների սխալներից է բխում: Օրինակ՝ նոյն գազամուղի հարցում: Այդ ինֆորմացիան հասնում է, չէ՞, որ կարող է Իրան-Հայաստան գազամուղի հայկական հատուածը տրուի «Հայուսգազարդին», - բացատրում է քաղաքագէտը: Վերջինս կարծում է, որ Իրանի հարցում Հայաստանը պարտաւոր է աւելի ակտիվ քաղաքականութիւն վարել:

«Իրանի բոլոր քայլերը, նախաձեռնութիւնները, որոնք աշխարհի մօտ առաջացնում են դժգոհութիւն եւ զայրոյթ, մենք չենք կարող պաշտպանել: Այնուամենայնիւ, մենք կարող ենք առաւել ակտիվ քաղաքականութիւն վարել, օրինակ՝ համոզելով նոյն ԱՄՆ-ին, արեւմուտքին, որ այս տնտեսական ծրագրերը էներգետիկ ոլորտում, որ անում ենք Իրանի հետ, հարկադրուած քայլեր են, այլընտրանք չունենք:

Մենք պարտաւոր ենք բացատրել աշխարհին, որ եթէ վատ զարգացում ստանան Իրանի հետ հարցերը, այս տարածաշրջանը կարող է ապակայունանալ», - ասում է Ստեփան Գրիգորեանը՝ կանխատեսելով, որ պասիվ քաղաքականութեան դէպքում Հայաստանի նկատմամբ ճնշումները կ'ուժեղանան: Մանաւանդ, որ ԱՄՆ-Իրան հակամարտութիւնը խորանում է:

ՄԱՅԻՍ 12-Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ ՍԿԱԾ ԵՆ ԺԱՄԱՆԵԼ ՅԱՅԱՍՏԱՆ

Շարունակուած էջ 1-էն

ներու ներկայացուցիչները հանդիպումներ պիտի ունենան կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի, խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցող եւ չմասնակցող կուսակցութիւններու եւ զանգուածային լրատուամիջոցներու ներկայացուցիչներու հետ:

Պատրաստակամութիւն յայտնելով աջակցելու դիտորդներուն՝ իրենց առաքելութեան մէջ, նախարար Օսկանեան ըսած է թէ Հայաստանի իշխանութիւնները եւս շահագրգռուած են ազատ եւ արդար ընտրութիւններով:

Մայիս 12-ի նախօրեակին Հայաստան պիտի ժամանեն ԵԱՀԿ-ը ներկայացնող 300 դիտորդներ:

ԴԻՆՔԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՆ ՈՍՏԻՎԱՆՈՒԹԵԱՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Ակօս» թերթի սպաննուած խմբագրապետ Հրանդ Դինքի ընտանիքի փաստաբանները պահանջել են իրաւական հետաքննութիւն անցկացնել այն պաշտօնեաների նկատմամբ, ովքեր, իրենց կարծիքով, ներգրաւուած են եղել յանցագործութեան մէջ:

«Մենք դատախազից պահանջել ենք հետաքննութիւն իրականացնել այն բոլոր պաշտօնեաների նկատմամբ, որոնց արդեն վարչական մեղադրանք է ներկայացուել», - լրագրողներին ասել է փաստաբան Բահրի Բայրամ Բելենը:

Մէկ այլ փաստաբան՝ Ֆեթիէ Չեթինը, ցոյց է տուել այն գրութեան պատճէնը, որով Տրապիզոնի ոստիկանները տեղեկացրել էին Իսթանպուլի իրենց գործընկերներին պատրաստուող սպանութեան մասին: Փաստաբանի վկայութեամբ՝ նոյն բովանդակութեամբ 17 գրութիւն է ուղարկուել Իսթանպուլի ոստիկանութիւն:

«Սա ապացուցում է, որ դա թերացում կամ մոռացկոտութիւն չէր, այլ իշխանութիւնների գիտակցուած մասնակցութիւն յանցագործութեանը», - ասում է նա:

ԿՈՐԾԱՆՈՒՄԻՑ ՓՐԿՈՒԵՑ ԵՄ ՄԵԿ ՅԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: 2007 թուականի փետրուարին աւարտուեց Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցու վերականգման առաջին փուլը: Ծուրջ 200-ամեայ եկեղեցին վթարային լինելու պատճառով, մօտ մէկ տարի է՝ չի գործում: Յաճախակի երկրաշարժերի եւ ստորգետնեայ տրանսպորտի կառուցման եւ այլ պատճառներով ճարտարապետական այս ինքնատիպ կառուցը ոչնչացման վտանգի տակ էր:

2006 թուականի Յուլիսից «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Արգենտինայի տեղական մարմնի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ԱՄՆ Արեւմտեան թեմի հովանաւորութեամբ սկսուեց եկեղեցու վերականգման առաջին փուլը:

Այսօր արդէն՝ առաջին փուլի աշխատանքների աւարտին, ամրացուել են եկեղեցու հիմքերը,

ներքին սիւները, մետաղական կոնստրուկցիաների միջոցով ամրակայուել են պատերը: Վերացուել են շէնքի տակ հաւաքուող ջրի կուտակման պատճառները: Եկեղեցու վերականգման նախագիծը, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի պատուէրով, իրականացնում է «Կառուցապատում եւ սպասարկում ԳԱԿ» ՓԲԸ-ն /նախագծի հեղինակ՝ Սերգէյ Աթոյեան, ճարտարապետ՝ Հենրիկ Աղայարեան/:

Առաջիկայում նախատեսուած է Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցու ներսի նորոգումը: Վերանորոգութեմի առաջնորդ Վազգէն Եպիսկոպոս Միրզախանեանը լիպոյս է, որ տարեվերջին Թբիլիսիի Ս. Էջմիածինը կը վերաբացուի, եւ շուրջ 150 հազար թիֆլիսահայեր իրենց ազգային ինքնութեան, հոգեւոր-մշակութային կեանքի պահպանութեան եւս մէկ օջախ կ'ունենան:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ՝ ՎԱՂՈՒԱՆ ԵՐԱՇՆԻՔ

Շարունակուած էջ 1-էն

Ժուրթեան մատնել ամէն Գախաճեմուրթիւն եւ գոյութեան պահպանման պայմար:

Այս բոլորը տեղի կ'ունենան այն պատճառով, որ մեր շուրջ կը ճուրանան մեր ապագան ապահովելու ու կորոզելու կոչում մեր նոր սերունդներու ժիր շարքերը:

Պետ էր սկսիլ յեղաշրջել այս կացութիւնը:

Անցեալ 2օրեխաբթի, ներկայ գտնուեցանք Փաստաբանի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու Տիկնայ Միութեան Միջինի բնօրինակին: Արեւմտեան Թեմի Բարեջան Առաջնորդ Յովնան Արք.ի աւուր պատշանի ելոյթէն վերահասու դարձանք, թէ ԱՄՆ-ի Արեւմտեան Թեմը՝ Սրբ. Էջմիածնի հովանաւորութեամբ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՏԻ ՏՈՒԱԾ Է ՅԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 1-էն

եան խախտած է ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ եղած ներդրումային պայմանագրերը:

Ֆլերլէ ըսած է, որ Global Gold-ի փաստաբանները դատարանի մէջ պիտի փորձեն ցոյց տալ, որ ընկերութեան գործունէութեան դէմ խոչընդոտները սկսած են, երբ բնապահպանութեան նախարարի պահանջած 3 միլիոն տոլարի կաշառքը մերժուած է իրենց կողմէ: Ամերիկեան ընկերութեան Հայաստանի մէջ ներկայացուցիչ

Աշոտ Պողոսեան «Ազատութիւն» ռատիոկայանին փոխանցած է, որ Հանքաւանի ոսկիի հանքը իրենցմէ առնելով, տրուած է մէկ այլ ընկերութեան»:

Յիշեցնենք որ, ամիսներ առաջ մամուլի մէջ լայն արձագանք գտած էր, բնապահպանութեան նախարար Վարդան Այվազեանի կողմէ 3 միլիոն տոլարի կաշառք պահանջուած ըլլալու պարագան: Այդ առթիւ ըսուած էր նաեւ, որ Այվազեան պաշտօնանկ պիտի ըլլար: Սակայն, այդ կանխատեսումները չիրականացան:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԴՅԿ «ՍԱՐԳԻՍ ՏՆՐՈՒՆԻ» ՄԻՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՆԱՐԵԿ ԳԱԼՍԵԱՆԻ ՀԵՏ ՑԻՆԻՉՄԻ ԱՍՏԻՃԱՆ ՍՈՒՏ ԽՕՍՔԵՐ

ՌՈՒՋԱՆ ԱՒՈՅԵԱՆ

Ազգային ժողովի ընտրություններին ընդառաջ ակտիվացել են նաև հայաստանեան կուսակցությունների երիտասարդական թեկերը: Դրանցից մեկի՝ Սոցիալ-Դեմոկրատական Հանրակցության կուսակցության «Սարգիս Տնրուհի» երիտասարդական Միության ջանքերով, դեռևս 2006ի Դեկտեմբերի 10-18ը, Երեւանի բոլոր պետական բուհերում անցկացուել է սոցիալաբանական հարցազրույցի պարզեղու այնտեղ առկա կոուլպիայի դրսեւորումները:

«Ընտրությունների շնորհիվ ցանկանում էինք փակել այս թեման, քանի որ պատկերն ամբողջացնելու առումով գործը գրեթե աւարտուած է: Բացի այդ, չենք ցանկանում, որ մտածեն, թէ ջահելները քաղաքական դիւրեղներ են հաւաքում»: - ասաց ՍԴՀԿ-ի Երիտասարդական Միության ատենապետ Նարեկ Գալստեանը:

Երկու հազար ուսանողների շրջանում պատուիրուած սոցիալոգիականները նպատակ ունեն ճշգրիտ բուհերում կուուպիայի մակարդակը: «Կա՞յ արդեօք կուուպիա բուհերում», հարցուածներից 1821ը պատասխանել է՝ այո: «Անկախ նրանից՝ սոցիալոգիան ինչ գնահատական տրուեց, որակեց օբյեկտիւ, թէ սուբյեկտիւ, մեզ, որպէս երիտասարդների, հետաքրքիր էր, որտեղ ենք սովորում, ինչպիսի համագամանքներում: Բուհերի ռեկտորներն առիթը բաց չեն թողնում գեղեցիկ խօսքեր ասելու կուուպիայի դէմ պայքարի մասին: Իրականում մեր հարցումները պարզեցին, որ այդ ամէնը ոչ միայն ճիշտ է, այլև ցինիզմի աստիճան սուտ է, եւ այն պատկերը, որ կայ մեր բուհերում, իրականում միւլթարական է: Հետաքրքիր է, որ նոյնիսկ հարցման ընթացքում բուհերը տարանջատուեցին: Դրանցից մի քանիսը համարում են էլիտար, այդ թւում առաջինը՝ Մ. Հերացու անուան բժշկական համալսարանն է՝ իր 86% կուուպիայի ցուցանիշով: Երկրորդը՝ Տնտեսագիտական համալսարանն է (81%), երրորդ պատուաւոր տեղում Բրուսովի անուան լեզուաբանական համալսարանն է:

Էլիտար չհամարուող բուհերում եւս վիճակը բարեք է: Բոլոր հարցուածներից ամենաբարձր ցուցանիշն Ազգային (Գիւղակադեմիա) համալսարանինն է՝ 96%, այնուհետեւ գալիս է ԵՀՆ-ն՝ 85,5%-ով եւ «Մանկավարժականը», 79%-ով», ներկայացրեց Նարեկ Գալստեանը:

Սա պետական բուհերում տիրող պատկերն է: Առաւել վատ է վիճակը որոշ մասնաւոր բուհերում, որոնք ոչ միայն չեն արժանանում բաւարար ուշադրութեան, այլև «մի կողմ քաշուած» դիպում են վաճառում: Նարեկը համաձայն է մեր դիտարկմանը: «Մասնաւոր բուհերում կուուպիան իրօք լուրջ դրսեւորումներ ունի: Սակայն մենք ֆինանսական եւ ժամանակային առումով ի վիճակի չեղանք դրանց եւս անդրադառնալու:

Լուրջ ծրագիր ենք մշակել, որ շրջանակներում բուհերում կը ստեղծուի ուսանողական արհմիութիւններ, որոնք կը վերահսկեն, կը կանխեն կուուպիայի դրսեւորումները: Այդ ուսանողները «կցուած» չեն լինի ռեկտորատին (ինչպէս այժմ ուսիտորներին են) անկախ կը լինեն ու մտահոգուած բուհի եւ իրենց ընկերների ինդիւրներով: Համոզուած ենք, որ կԳ նախարարութիւնից անկախ մարմինները պէտք է ստաձնեն այդ գործը: Իսկ կոնկրետ նախարարը, որ կոչուած է վերահսկելու պայքարը եւ առաւել հզօր

լծակների է տիրապետում, սակայն, կարծես անարդիւնք: Կտրուկ, շրջադարձային մօտեցման, բարեփոխումների կարիք կայ: Թէ չէ, երեք տարի է քննարկուած է արտգրականութեան դասախօս Արտեմ Յարութիւնեանի հարցը եւ երեք տարի է չեն կարողանում որոշել, նա կաշառակեր է, թէ ոչ»:

Ըստ մեր գրուցակցի, իրենք երկու անգամ հանդիպել են կԳ նախարար Լեւոն Մկրտչեանին: Նա կարծես թէ ողջունելի է համարել երիտասարդների նախաձեռնութիւնը, եւ պայքարն իրենց իրաւունքների համար: «Նախարարը բուհերում քննարկումներ կազմակերպելու առաջարկներ կայացրեց. պատմեց Նարեկ Գալստեանը, - սակայն մենք հրաժարուեցինք դրանց մասնակցել, քանի որ, մեղմ ասած,



գործը ձեռնամարտի էր հասնում»:
Ձեռն վախենում, որ հալածանքների կ'ենթարկուեն նման մաքսիմալիստական մօտեցման համար: Ձէ՞ որ նախաձեռնող խմբի բոլոր անդամներն ուսանողներ են, ու նրանց դէմ կարող են պատժիչ քայլեր ձեռնարկել, օրինակ, քննութիւնները չնշանակել, ճնշել, անգամ բուհից հեռացնել, քանի որ մեր երկրում ըմբոստները տեղ չունեն: «Հիստերիկ արձագանքը, որ եղաւ մեր արածի հանդէպ, ի հարկէ չզարմացրեց, սակայն մի տեսակ սառը ցնցուղ էր մեզ համար: Մեր առջեւ լառնեց մի հակայական համակարգ, որը

հրէշի նման պատրաստ էր ոչնչացնել իրեն դիպչողին: Սակայն հետեւողական ենք լինելու եւ զաղափարների համար պայքարելու ենք մինչեւ վերջ: Վստահ ենք, որ մեր գործն օգտակար է եւ արդար: Նշեմ, որ ես սովորում եմ ԵՊՀ-ի «Միջազգային յարաբերութիւններ» ֆակուլտետում՝ քաղաքագէտի մասնագիտութիւն: Ունեմ բացարձակ գերազանց առաջադիմութիւն, նման առաջադիմութիւն ունեն նաեւ միութեան փոխնախագահը եւ միւս անդամները: Այդ առումով հաւատացնում եմ, որեւէ մէկից կախուած չենք», - ասաց Նարեկ Գալստեանը:

HOMENMEN
Glendale Chapter

Celebrates

**EASTER
EGGSTRAVAGANZA**

Sunday April 8, 2007
2:00 pm

At The
Brandview Collection
109 E. Harvard, Glendale, California

Join us for feast, fun and Easter games
with family and friends

For more info please call (818)384-2987

Donation:
\$35 Adults, \$25 Children (5-12)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ո՞ՒՐ ԿՐՆԱՅ ԸԱՍՆԻԼ ԻՐԱՔԻ ՏԱԳՆԱՊԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Իրաքեան պատերազմը ահա-
ւոր ուղղակարական եւ բարոյա-
կան աղէտ մըն էր հիմնուած սխալ
ենթադրութեանց վրայ: Որո՞նք էին
այդ ենթադրութիւնները:

- Իրաքի բռնատէր Սատտամ
Հիւսէյնի մասսայական գէնքերու
ձեռքբերման առաջապէս իրաքի Ամե-
րիկայի սպառնացող ոչո՞ք ըլլալու
«վտանգը»:

- Իրաքի Ուսամա Պըն Լատընի
հետ գործակցութեան կարելիու-
թիւնը:

Այս բոլորը այսօր փաստուե-
ցան որ սուտ էին: Իսկական նպա-
տակները իրաքեան արկածախնդ-
րութեան կրնան նկատուիլ:

- Իրաքեան քարիւղի վրայ
Ամերիկայի ունեցած «ախորժա-
կը»:

- Միջին Արեւելքի մէջ նոր
«Հասարակարգ» մը հաստատելու
Ամերիկայի որոշումը:

- Իսրայէլի ապահովութեան
ձեռքբերումը:

- Ամերիկայի նախագահ ճորճ
Պուշի վրէժ լուծելու ցանկութիւնը,
իր հօր վրայ եղած մահափորձի
դիմաց,

եւ այլ ծածուկ եւ գաղտնի
մնացած տրամադրութիւններ, որոնք
ժամանակի կը սպասեն հրապարակ-
ուելու համար:

հազար հաշուող: Այս բոլորը մարդ-
կային զոհեր միայն: Նիւթական
քանդուածներու հաշիւը տակաւին
չկայ:

Մնալով շրջանային մարզէն
ներս, եթէ նախապէս «Սատտամի
օրով, Իրաքն էր «անկայունը», ներ-
կայիս ամբողջ Միջին Արեւելքը
վերածուած է անկայուն վիճակի,
յատկապէս ստեղծելով իրանեան գօ-
րաւոր ներկայութիւնը Լիբանանէն
մինչեւ Իրաք:

Պէտք է մոռնալ նաեւ ամերիկե-
ան բանակի գործած «ճայրայցողու-
թիւնը» Ապու Ղըէյպ բանտ, անտեղի
սպանութիւններ, բռնաբարում
եւայլն, երեւոյթներ որոնք առաւել
եւս կը սպառնան Ամերիկայի բարո-
յական վարկին:

Իրաքեան գետնի վրայ, աւան-
դական միջ-յարանուանական լար-
ուածութեանց վրայ - քիւրտ, սիւննի,
չիի, ներկայիս իրաքեան բեմի վրայ
հաստատուած են այլ ահաբեկչական
միաւորներ, որոնցմէ գլխաւորը ԱԼ-
Քալիտան, որ սիւննիներու հետ հա-
մագործակցելով, հանապազօրեայ
ահաբեկչութիւններ կը կատարէ: Ար-
դէն իսկ կը խօսուի քաղաքացիական
լուրջ պատերազմի մը մասին, որուն
աքցանին մէջ բռնուած է ամերիկեան
բանակը: Իսկ իրաքեան կառավարու-
թիւնը շիիններու մեծամասնութեամբ
կը փորձէ ինքզինք պարտադրել երկ-
րին առանց յաջողելու:



տեղի չտուենար, այս չի նշանակեր
որ այս նոր պատերազմը կրնայ մօտ
ատենէն վերջանալ:

Մինչ այդ ամերիկեան հնարա-
յին կարծիքը երթալով աւելի աննե-
րող կը դառնայ Պուշի իրաքեան
քաղաքականութեան դէմ, եւ տեմք-
րաթիւներու իշխանութեան գալով,
արդէն իսկ կը խօսուի բանակը
«սուտ բերելու» մասին, որոշ ժամ-
կէտով մը: Ներկայիս լուրջ խօսակ-
ցութիւն չկայ պատերազմի նիւթա-
կան աղբիւրները դադարեցնելու մա-
սին, սակայն եթէ Գոնկընսը այդ
որոշումը առնէ, ինչպէս վիեթնամի
պարագային եղաւ, Ամերիկա ուղղա-
կի պիտի անճրկի եւ տեղի տայ
պատերազմէն վերջ դնելու սպառ-
նալիքին:

Աւելին ամերիկեան քաղաքա-
կան կեանքը ներկայիս բռնուած է
ընտրական տեղով, մինչեւ 2008ի
նախագահական ընտրութիւնները,
երբ կ'աւարտի Պուշի իշխանու-
թեան շրջանը: Նոյնպէս ամերիկեան
բանակի բարձրաստիճան սպաները,
որոնցմէ շատեր փոխարինուեցան
այս չորս տարիներուն, կասկած կը
յայտնեն պատերազմական յաղթա-
նակի մը կարելիութեան մասին:

ՈՒՐԵՄՆ ԻՆՉ ԿԸ ՄԱՅ
ՆԵՐԿԱՅԻՍ:

Ամերիկայի «պարտութիւն» մը
Իրաքի մէջ կրնայ կործանարար
ազդեցութիւն մը ունենալ ազգային
շահերու տեսակէտէն: Նաեւ այս եթէ
շարունակուի, Իրանի հետ եւ անկէ
անդին, իսլամական աշխարհի հետ
յաւելեալ տագնապներ հաւանական
կը թուին, անորոշ եւ ժխտական
երկարաձգումներով: Առանձին մնա-
ցած Ամերիկան կրնայ երկար տարի-
ներու աւագախորտմի մը մէջ մտնել,
եթէ Իրանի հետ հարցերը աւելի
լրջանան: Եւ ոչ միայն Իրանը, այլ
նաեւ Աֆղանիստանը, շատ հաւանօ-
րէն Փաքիստանն ալ կրնան շարունա-

կել այսօրուայ անապահով վիճակը:

Դժբախտաբար, սկզբնական
սխալ հաշիւներով սկսուած պատե-
րազմը կրնայ նմանիլ, ժամանակին,
Նացիզմի, Ֆաշիզմի, կամ Ստալի-
նիզմի դէմ մղուած պայքարներուն:
Այժմու տուեալներով իսլամական
ծայրայցողութեան եւ ԱԼ-Քալիտան
դէմ եղած պայքարը շատ ալ հեռու
չէ վերոյիշեալներէն: Սեպտեմբեր
11ի արարքը կը նմանի Փըրլ Հար-
պըրի յարձակումին, որ Ամերիկան
մխրճեց համաշխարհային շրդ պա-
տերազմէն ներս:

Եթէ Նացի Գերմանիան, եւ
Պուշեիկեան Ռուսաստանը ազգա-
յին բանակներով օժտուած էին,
անդին, իսլամական ծայրայցողական
մտայնութիւնը անդիմադիւ եւ գրե-
թէ խորհրդաւոր հանգամանք ունի:
ԱԼ-Քալիտան փոքրամասնութիւն մը
կը կազմէ: Ինչ կը վերաբերի Իրաք-
ցիներուն, անոնք ոչ թէ բռնուած են
իսլամական ծայրայցողութեան մէջ,
այլ կը պայքարին ամերիկեան ուժե-
րու «գրաւման» դէմ, իւրաքանչիւր
Իրաքեան կողմ իր յատուկ շահերը
հետապնդելով: Այսօրուայ վիճա-
կով, չկայ աշխարհի վրայ որեւէ
երկիր որ բաժնէ Ամերիկայի ձգտում-
ները եւ փառասիրութիւնները: Ամե-
րիկեան ըսուեցաւ արդէն, այսօր կը
գտնուի երթալով աւելի լուրջ քա-
ղաքական մեկուսացման մէջ, եւ
պարտաւորութեան տակ է հիմնովին
վերանայելու իր ցարդ հետեւած
քաղաքականութիւնը: Պէտք է ձեւ
գտնել Իրաքի պատերազմին վերջ
մը տալու, ստեղծելով շրջանային
սպահովութեան գոտի մը, որ ընդգր-
կէ ոչ միայն Իրաքը, Իրանը եւ
Սուրիան, այլ յատկապէս Պաղեստի-
նը, Լիբանանը, Իսրայէլը եւ շրջանի
միւս երկիրները: Դիւրին չէ այս
առաքելութիւնը, եւ սակայն կարելի
է միայն պետական պատասխանա-
տու մտածողութեամբ, ձեռքագատ-
ուած մեծամտութեան ախտէն:

ԻՆՉ ԱՐԺԵՑ ԱՅՍ
ԱՐԿԱԾԱՆԵՐՈՒԹԻՒՆԸ
ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ

Արդէն իսկ չորրորդ տարին
բոլորած պատերազմ մըն է, աւելի
երկար քան համաշխարհային շրդ
պատերազմը, որուն աւարտը տա-
կաւին կը մնայ անորոշ:

Միջազգային գետնի վրայ, Ամե-
րիկա կորսնցնելու վրայ է իր հա-
մաշխարհային վարկը, եթէ արդէն
իսկ չէ կորսնցուցած: Իր միակ եւ
գլխաւոր նեցուկը ցարդ կը հանդի-
սանար Անգլիան, որ նոյնպէս վերա-
նայելու վրայ է իր ուղղութիւնը:
Այն բոլոր երկիրները որոնք զօրք
դրկած էին Ամերիկայի բանակի
կողքին կուուելու, կամաց կամաց ետ
կը քաշեն, ներառեալ անգլիական
զօրքերը, ձգելով որ Ամերիկան
ինքը, 140-150 հազար զինուորնե-
րով շարունակելու պատերազմը:

Յարդ, մոռնալով միւս արկա-
ծախնդրութիւնը որ Աֆղանիստանն
է, Իրաքի պատերազմը իսլամ է 3
հազարէն աւելի ամերիկեան բանա-
կայիններ, իսկ իրաքցի զոհերու
թիւրը կը մնայ անորոշ, 50-100

ԻՆՉ Կ'ԸՆԵ ԱՍԵՐԻԿԱՆ

Իրաքեան պատերազմը սկսող
խումբը մեծ մասամբ տակաւին
հրապարակի վրայ է, մէկ ձեռք
մատերուն վրայ համբուող: Պուշ
ինքը, յամառօրէն կը մնայ կառչած
իր «ընթացքը շարունակելու»: Իր
փոխ-նախագահ Տիք Չէյնի, մինչեւ
այսօր տակաւին կը խօսի «յաղթա-
նակ» տանելու մասին: Երկու հոգի-
ներ միայն, պատերազմական նախա-
րար Առնըլտ Ռեմֆօլտ եւ իր
օգնականը՝ Ուլֆօտից, հրապարա-
կէն «քշուեցան», առանց ուղղակա-
րական փոփոխութիւն արձանագրե-
լու: Ընդհակառակը, Պուշ որոշած է
եղած բանակին վրայ յաւելեալ 22-
28 հազար զօրք դրկելու, միշտ
յաղթանակ երազելով: Հասկնալի է
անշուշտ, աշխարհի ամենագօրաւոր
երկրի մը համար, պարտութեան
մասին խօսիլ: Սակայն արդեօ՞ք
վիեթնամը պարտութիւն չէր: Իսկ
ո՞ւր մնաց նաեւ միջազգային ահա-
բեկչութեան դէմ պատերազմը, որ
ամէն օր իր գլուխը կը ցցէ տարբեր
երկիրներու մէջ: Եթէ ամերիկեան
հողի վրայ, նոր ահաբեկչութիւն

Advertisement for Blue Cross of California. It features a circular diagram showing various PPO and HMO plans with their respective share amounts (e.g., PPO Share 2500 & 3500, PPO Share 1500, PPO Share 1000, PPO Share 500, Basic PPO 1000 & 5000*). The text promotes 'The Power of Blue' health coverage for every household member and every household budget, highlighting 'Affordable plans for the whole family.' It also mentions 'Featuring PlanScape® Keeping Californians Covered...' and provides contact information for Blue Cross of California and BC Life & Health Insurance Company.

Advertisement for A.B.A. Insurance Services celebrating a 30th Anniversary (1975-2005). The ad features a caricature of Bedros Siamanto Maronian, an agent for Blue Cross of California. It provides contact information: 818-500-9585, 805 East Broadway, Glendale, CA 91205. The address is also given as ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD". It is an authorized agent for Blue Cross of California, license # 0494056.

ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԵՑԱԻ ԱՄԵՆԱՅՆ ԸԱՅՈՑ ԸԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ «ՍՈՒՐԲ ՍԱՇԱԿ-ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Տարեկից բնի ի վեր Յարութ Սասունեանի ի պատիւ եղած մեծա- րանքի հանդիսութեանց մեծագոյ- նը հանդիսացաւ Կիրակի, Մարտ 18ին, 2007, կէսօրէ ետք ժամը 6ին, հովանաւորութեամբ Արեւմտեան Թեմի բարեջան առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի:

Արդարեւ բազմահարիւր հայ- րենակիցներ ներկայ գտնուեցան Պրըպէնքի առաջնորդարանի Գա- լայճեան սրահը, ուր Ամերիկացի Հայ Գրողներու Միութեան նախա- ձեռնութեամբ տեղի ունեցաւ սոց- ձեռնարկը, որուն իրենց մասնակ- ցութիւնը բերին Հ.Բ.Ը. Միու- թեան Մշակութային Յանձնարում- քը, ինչպէս նաեւ Նոր Սերունդ, Համազգային, Թէքէեան Մշակու- թային եւ Պոլսահայ Միութիւննե- րը:

Ներկաներուն մէջ կը նշմար- ուէին առաջնորդ՝ Գերշ. Տ. Յով- նան Արք., նախկին առաջնորդ՝ Գերշ. Վաչէ Արք., Հայաստանի փոխ-արտաքին գործոց նախա- րար Արմէն Բայբուրդեան, Լոս Անճելոսի Հ.Հ. աւագ հիւպատոս Արմէն Լիլոյեան, ինչպէս նաեւ գաղութի տարբեր կազմակեր- պութեանց ու մամուլի ներկայա- ցուցիչներ:

Օրուան հանդիսավարն էր Ամերիկացի Հայ Գրողներու Միու- թեան նախագահ՝ Թորգոմ Փոս- թաճեան: Ան ամփոփ զիճերու մէջ

ներկայացուց մեծարեալ Յարութ Սասունեանը, որ նախագահն է Միացեալ Հայկական Հիմնադրա- մի, փոխ-նախագահը Լինսի հիմ- նադրամի ու հրատարակիչը The Armenian Courier շաբաթաթեր- թին:

Ան կարգաց Հայաստանի նա- խագահ Ռոպերթ Քոչարեանի յղած շնորհաւորագիրը:

Այս առթիւ սրտի խօսքերով ու ուղերձներով հանդէս եկան Սերժ Սամոնեանց (մեծարեալի տարիներու գործակիցը եւ խմբա- գիրը), Տօքթ. Գէորգ Քէշիշեան (Հ.Բ.Ը.Մ.), Լիլիթ Քէհէեան (Թէ- քէեան Մշակութային Միութիւն), Գէորգ Պետրիկեան (Համազգային Մշակութային Ընկերակցութիւն), Յարութ Տէր Դաւիթեան (Նոր Սերունդ Մշակութային Միու- թիւն), Սիմոն Աճըրլաճօղլու (Պոլ- սահայ Միութիւն), Չարլի Ֆրէշտ (Ամերիկացի Կաթողիկէ Միսիո- նարներու Կեդրոնական Վարչու- թիւն):

Օրուան գլխաւոր բանախօսն էր Դոկտոր Հրայր Տէօքմէճեան: Որպէս երկար տարիներու բարե- կամ ան բարձր գնահատեց Յարութ Սասունեան ազգօգուտ ծառայու- թիւնները թէ՛ մամուլի, թէ՛ Միաց- եալ Հայկական Փոստի թէ՛ Լինսի Հիմնադրամի եւ թէ՛ ամերիկեան ու միջազգային շրջանակներէ ներս: Ան շեշտեց որ Յ. Սասունեանի

ջանքերուն շնորհիւ ՄԱԿ-ը ընդու- նեց Հայոց Յեղասպանութեան իրա- կանութիւնը:

Լոս Անճելոսի Հայաստանի աւագ հիւպատոս Արմէն Լիլոյեան իր ելուցիին մէջ դրուատալից խօս- քեր ուղղեց օրուան մեծարեալին, առանձնապէս գնահատելով ամե- րիկեան եւ օտար հասարակութեան մօտ անոր բերած նպաստը ցեղաս- պանութեան ճանաչման համար:

Գալիֆորնիայի Խորհրդարա- նի անդամ Փոլ Գրիգորեան իր սրտի խօսքն ուղղեց եւ Յ. Սասուն- եանին յանձնեց Նահանգային Խորհր- դարանի գնահատագիրը:

1942ին այդ գաղափարը իմ մէջը սպաւորուած մուտք գործեցի սկաուտական շարքերը Միլիթարեան վարժարանում, մի տարի անց եղայ վարիչ առաջնորդ 1943ին պատերազմը սարսափելի վիճակի ժամանակ, հայ Քերովբէ վարդապետը շաբաթը երկու օր դասի ընթացքում կէս ժամ գրատախտակի մօտ կանգնած պատմում էր պատերազմի մասին, նաեւ վարկաբեկում էր Հայաստանը, հայ ժողովուրդը շարքի է հագնուում, անասունաւոր անունով թերթ է լոյս տեսնում, բոլոր հայերը աղքատ վիճակի մէջ են այլեւայլ խօսքեր, չէի կարող հանդուրժել գրատախտակը, Քերովբէ վարդապետը ակնոցով դէպի գրատախտակը գրաւոր կատարում էր, կաւիճը դպնալով ակնոցին ապակին ջարդուեց, Միլիթարեան վարժարանի տնօրէնը հայ Բարսեղ Վրդ. Ֆերհատեանը, ինձ դպրոցից հեռացրեց, գիրքերս հաւաքեցի գնացի պարտէզ օրս անցկացնելու մինչեւ դպրոցի ժամը վերջանայ, տուն վերադարձիս գիրքերս բացում էի հայրս չիմանալու համար դպրոցից հեռացուած եմ, ամէն օր կ'երթայի պարտէզ եւ դպրոցի ժամին տուն էի վերադառնում, երկու շաբաթ տեւեց մինչեւ որ հայրս իմացաւ դպրոցից հեռացրել են ինձ, յաջորդ օրը իր կուսակցական երկու ընկերոջ ինձ ալ վերցրին գնացինք դպրոց, բաւականին վիճաբանութիւնից յետոյ տնօրէնը համաձայնուեց ընդունել, եւ ինձ ուղարկեց դպրոցի երկրորդ յարկում եկեղեցի գոյութիւն ունէր Աստուծոյ աղօթելու մեղքերս քաւելու համար, իմ մէջը ասելով թիւնով լեցուեցաւ դպրոցի հանդէպ որով իտալիան Գերմանիոյ մրցակիցն էր, Միլիթարեան վարժարանը պատկանում

է վենետիկին, եւ սկսան խոր աչքով նայել ինձ, քանի որ Հնչակեան կուսակցութեան գաւազնի եմ: Այսպիսով թողեցի դպրոցը, գնացի էջըէֆիէի Սէն Կրէկուար գոլէճը, նորից մուտք գործեցի սկաուտական շարքերը, մի քանի ամիս յետոյ դարձայ իմ գիտելիքների շնորհիւ իմ բաւազն, Հնչակեան կուսակցութեան գաղափարը ինձ հանգիստ էր թողնում, դիմեցի Կեդրոնական վարչութեան որպէսզի ինձ ընդունեն իրենց շարքերը, երդումս տուեցի Սահակեան սրահի մէջ քաւորս եղաւ մեծարգոյ Հրանդ Գանգրուհին, այդ ժամանակ 16 տարեկան էի, երդման կուսակցութեան նշանաբանը հաւատարիմ մինչեւ կեանքի վերջը, Անդր-Նահրի մէջ բաւականին երեխաների վիճակի չէին դրամով սովորելու, կազմակերպեցի սկաուտական խորհուրդ, բոլոր փողոցի երեխաները 8 տարեկանից մինչեւ 18 տարեկան ընդգրկուեցան սկաուտական շարքերը, նպատակս այն էր փողոցի երեխաները դաստիարակուին Հ.Մ.Մ.ի կազմակերպութեան մէջ, նաեւ կազմակերպեցինք «Մասիս» ֆուլթայլի խումբը եւ «Տաւրիկ» պատանեկան ֆուլթայլի խումբը:

Կեդրոնական վարչութիւնը 1945ին իմ աշխատանքը գնահատելով արժանացրին Հ.Մ.Մ. պատուոյ շքանշանին, 1946ին ներգաղթը սկսեց դէպի Հայրենիք, սկաուտները իրենց ընտանիքներով որոշ չափով մեկնեցին Հայաստան:

1947ին վերջին կարաւանով մենք նոյնպէս պատրաստուեցինք մեկնելու Հայրենիք, Հոկտեմբեր ամիսն էր ժողովուրդը հաւաքուել էին Սահակեան դաշտում սպասելով Բոպետա նաւուն, երբ նաւը եկաւ հերթական կարգով ժողովուրդը բարձրացաւ մեր ընտանիքն ալ նոյնպէս, նաւուն մէջ 32 հոգի սկաուտներ կային, Հալէպից, Դամասկոսից, Պէյրութից, բոլորը մաքուր հագնուած, քանի որ իմբաւետ գոյութիւն չունէին, միայն ես

էի իմբաւետ, ըստ սկաուտական կանոնագրութեան իրաւունք ունէի հակելու բոլորին, սկաուտները հետեւում էին ժողովուրդի հակողութեան որպէսզի անկարգութիւններ չստեղծուի մինչեւ Պաթում հասնելը, երբ նաւը հասաւ Պաթումի նաւահանգիստը, բոլոր սկաուտները զինուորական շարքով ցած իջանք, 3 հոգի կառավարական մարդիկ ներկայացան մեզ կարգադրեցին բոլորիս հագուստները հանել, եւ մեզ ըսին սրանք գաբիթալիստական թափթիւկներ են, որոշ մասը վերցրին եւ տարին իրենց հետ, ահաւասիկ առաջին հիասթափութիւնը, որովհետեւ ինչ որ երազում էինք չի իրականացաւ, մեր նպատակը երեխաներին պէտք էր հաւաքէինք սկաուտական շարքերում մէջ դաստիարակելու համար: Պատերազմը նոր է վերջացել, ժողովուրդը նեղ կացութեան մէջ էր բաւականի որբեվայրի երեխաները փողոցներում թափառում էին շատ դէպքեր էր պատահում սկաուտ լինելը յանցանք էին համարում քանի որ 1921ին երբ կոմունիստները մուտք գործեցին արեւելեան Հայաստան, խստօրէն արգիլեցին, որովհետեւ սկաուտ բառը թարգմանաբար նշանակում է հետախույզ, կոմունիստները չի հանդուրժեցին այդ բառի իմաստութեան սկաուտները կարողութիւն ունէին հետախուզելու ամէն քայլափոխին եւ փոխարինեցին Լենինեան գաղափարով օժտուած պիորնէրներին, անցաւ մի որոշ ժամանակաշրջան, սկսայ որոնել իմ սկաուտներին մի մասը տեղաւորուել էին գիւղերում, մի քանի հոգիներ աքսորել էին Սիպիւր, բոլոր հայրենադարձները հիասթափուել էին օրէնքներից, ըստ կառավարական որոշման, ոչ մէկ հայրենադարձ իրաւունք չունէր աշխատելու որեւիցէ գործարան, ոստիկան եւ կամ կառավարական պաշտօնեայ, հայրենադարձները համարում էին երկրորդական մարդիկ, կարող են գործարաններին վնասել, այս բոլոր գործածքը իրականութիւն է, տուններին մէջ աշխատելը արգիլուած է, լինի դերձակ, կօշկակար, ոսկերիչ եւ այլ

մասնագիտութեան տէր մարդիկ միայն պէտք է աշխատէին շինարարութեան մէջ, առաւօտները ժամը 7ին հնչում էր ահաւասիկ հանգանգի ձայն գինիի գործարանից, բոլոր երեւան քաղաքի աշխատողները պէտք էր ժամը 8ին գործի գլուխ լինէին: 10 րոպէ ուշացման դէպքում (փրոկուլ) էին գրում գգուշացում, երրորդ անգամ ուշացման դէպքում դատի են տալիս, երեք օր բանտարկութեան, փողոցում երեք հոգի իրաւունք չունէին իրարու քով գալու, տուների մէջ իրաւունք չունէին քաղաքականութեան մասին խօսելու, թաղային լիագործները ենթակայ լինելով չեկիստներին ականջ էին դնում դուրսի պատից գիշերուայ ժամին լսելու տունի մէջ ի խօսակցութիւնը եւ յայտնում էին չեկիստներին, բաւականի անմեղ մարդկանց վախեցնելով ստորագրութիւն վերցնում էին որպէս մեղադրեալ ուղարկելու Սիպիւր Ալթայի կղզի, չի ենթարկուողները ծեծում էին ստորագրելու համար: Նոյն ժամանակում ինձ ալ բռնեցին տարին թրանուայ փառքի քովի բերդը կնվետէի մի պաշտօնեայ սկսաւ հարցաքննել ինձ, արտասահմանում ինչով էիր գբաղուում, պատասխանեցի սկաուտներ իմբաւետ էին փողոցի երեխաներին հաւաքում էինք որպէսզի դաստիարակչական աշխատանք տանելու, ինչու դպրոցներ գոյութիւն չունէին դաստիարակելու, դպրոցներ կային քանի որ փողով էր ի վիճակի չէին դպրոց ուղարկելու, գիշերուայ մինչեւ ժամը 12ը պահեցին ինձ իրենց մօտ, կնվետէի պաշտօնեան ոչ բան չի գտնելով սկսաւ վախեցնել ինձ գգրոցի մէջ ի դարակը բացեց մի հատ նկար հանեց, ըսելով ինձ սրա անունը Սարգիս է աշխատում է շէնքի մէջ որպէս շինարար ինքը կալանաւոր է դու բախցրել ես նրան, այս թուղթը եթէ ստորագրես որ դու փախցրել ես քեզ ազատ կը թողեմ, իմ պատասխանը եղաւ ես այդ մարդուն չեմ ճանաչում ոչ ալ տեսել եմ եւ իմ կամքի ուժով դիմադրեցի չի

Շաք.ք էջ 17

CHIROPRACTIC - MASSAGE - REHAB - NUTRITION - WEIGHT LOSS



CHIROPRACTIC HEALTH CENTER

Eliminate Pain Naturally without drugs. without surgery

- Low back pain
- Carpal Tunnel
- Sciatica
- Arthritis
- Hip and knee pain
- Stress relief
- Neck Pain
- Rehabilitation
- Headaches
- Accidents and injuries
- Post-surgical

• We welcome most insurance plans
• We offer flexible payment options

DR. TSOLAG KAZANDJIAN

623 West Duarte Rd., Ste. 5, Arcadia, CA 91007

CALL TODAY: 626.821.9544

Call now! Same day appointments available.



ԱՅԺՄԵԱԿԱՆ ՆԻԹԵՐ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԵՐՈՒՆ ՐԵՏ
ԴՊՐՈՑՆԵՐԸ ԴԱՐՁԱԾ ԵՆ
ԱՆԱՌԱԿԱՆՈՑ ԵՒ ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԴԱՐՔՆՈՑ

ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔՉՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

Ո՞վ տարակարծիք կրնայ ըլլալ վերոգրեալ յայտարարութեան, երբ ամենօրեայ իրողութիւնները խօսուեն վկայութիւններ են:

Ժամանակը այսօր՝ այն չէ, ինչ որ էր մօտիկ անցեալին: Տարբեր են մարդկային պահանջները, տարբեր են մտայնութիւնները եւ բոլորովին հակասական՝ գաղափարախօսութիւնները:

Ամէն տեղ փորձութիւնները կը սպասեն իրենց միամիտ գոհերուն: Տունէն դպրոց եւ դպրոցէն տուն, վարպետօրէն լարուած են ծուղակները եւ անկումները կը կատարուին դիւրին գահավիժումներով:

Իմ տարիքիս աշխարհները, առաջին ինքնաշարժ տեսան իրենց մանկութեան հասակին: Այսօրուան գիտարուեստին գարմանահրաշ գիւտերը երազային հեռանկարներ էին:

Մանկական եւ պատանեկան աշխարհները իրենց ձգտողական նորութիւններով կը գերեն անոնց շահագրգռութիւնը: Երկար ժամերով նստած հեռուստատեսիլին առջեւ, կը ներմուծեն իրենց միտքերուն եւ հոգիներուն մէջ, ամէն ինչ, որ բարոյական ներխուժիւն է:

Մեր ժամանակը ապահով էր, չէինք մտածեր հաւանական վտանգներու մասին: Արձակուրդի օրերը, ծնողական հակողութենէ ազատ, անվախ կը խաղայինք տուններու առջեւ ու պարտէզներու մէջ մինչեւ արեւամար:

Ներկայիս, ո՞ր մայրը ըրպէ՛

մը կրնայ մինակ թողուլ գաւակը, առանց իր ներկայութեան:

Երեխաներու, մանուկներու, պարմանուհիներու յաճախադէպ առեւանգումները, համացերեկային ժամերուն կը կատարուին: Անոնցմէ շատերը կը խոշտանգուին եւ անոնց մարմինները կը նետուին աղբանոցներու մէջ կամ մացառուտ տեղեր:

Այսօր, ո՞ր մայրը կրնայ իր գաւակը, առանց հակողութեան թողուլ, որ տան առջեւ մինակը զբօսնու:

Վտանգը՝ պարտէզներու մէջ եւ ծովափնեայ տեղերը կը շեշտէ իր սարսափազդու սպառնալիքը: Եւ ամէն մայր, առանց թոյլտուութեան, գաւակին ձեռքը պինդ բռնած՝ շուկաներու մէջ կը կատարէ իր գնումները:

Փորձութիւնները՝ նորահաս սերունդի կեանքին անբաժան ուղեկիցը դարձած է: Մանուկը ըրպէ՛ական կ'ընկալէ իր ենթագիտակցութեան մէջ, գանձերու պէս, ինչ որ իր շահագրգռութիւնը կը շոյ՛է:

Բարոյագութեան հասարակութեան մէջ ծնած եւ մեծցած մեր գաւակները, չեն կրնար խուսափիլ վարակումներիէ: Փորձութիւններու մեղրածորան մատուցումները, շատ դիւրին կը գտնեն անոնց հոգիներուն դպչելու:

Մեր գաւակները, շատ դժուար ու ապերախտ ժամանակի մէջ կը բոլորեն իրենց մատաղատի տարիները: Եւ իրենց յաճախած ուսումնարանները, տարբեր չեն անառականոցներիէ, ուր բարոյական սայ՛-

թաքումները եւ սիրային ու սեռային յարաբերութիւնները, սովորական պատահարներ դարձած են: Դժուար կը նկատեն պարկեշտ ուսանող մը, որ յաջողի անխոցելի պահել հոգին արատներու ներխուժումէն:

Երբ 24 ամեայ ուսուցչուհի մը կը տրամադրուի իր 14 ամեայ աշակերտին հետ ազամական մեղքը գործելու, ի՞նչպէ՛ս կրնաս այդ դպրոցին ճակատէն ջնջել գործուած գայթակղութիւնը:

Խրատները եւ ազդարարութիւնները այս դարուն՝ անապատին մէջ բարբառող ձայներ են, նորահաս սերունդը չի լսեր զանոնք, պարսպութեան մէջ կ'արձագանգեն ու կը կորսուին:

Մտոգական բարոյական ալ այն չէ, ինչ որ էր մեր գարունամեայ օրերուն, ընտանիքը՝ իր ամբողջ կազմով, առաքինութիւն եւ բարեպաշտութիւն կը բուրհէր:

Երկինքէն առաքուած պատգամները չեն հասնիր երկիր, ամպերուն ետեւ կը կորսուին: Որովհետեւ, մարդոց եւ Աստուծոյ միջեւ հոգեկան հաղորդակցութիւնը խզուած է:

Հինգ տարեկան էի եւ մօրս գորովալից գրկին մէջ կը լսէի Աստուծոյ եւ Յիսուսի անուններուն հետ, Վարդան Մամիկոնեանի եւ Ղեւոնդ Երէցի անունները:

Այդ հայրենալուս բաղբուրտութիւնները կը կանգնէին մտքիս ու հոգիիս մէջ Լուսոյ Տաճարներ, աստուածապաշտութեան եւ հայրենապաշտութեան:

Այդ երկնային սրբանունները՝ օրուան բոլոր ժամերուն խաչահանումներով կը լսուէին իրենց շրթունքին վրայ եւ ամէն կիրակի անխափան ձեռքէս բռնած կը տանէր զիս եկեղեցի ուր հոգիս կը համաձուլուէր սուրբերու կեանքին

հետ: Հիմա, այդ հաւատքի ճանապարհը գոյութիւն չունի բիւրաւոր հայ մայրերու կեանքին մէջ, փոխարինուած է մեղքին ճանապարհով, որ կ'առաջնորդէ գիրենք դէպի անքուն Քաղաքը, որ կը կոչուի, Լաս Վեկաս:

* * *

Մարդիկ, այնքան կլանուած են իրենց ճիւղիմ շահերով ու հաշիւներով, որ Աստուծոյ եւ եկեղեցւոյ վրայ մտածելու, ոչ տրամադրութիւն ունին եւ ոչ յաւելեալ ժամանակ:

Մեղքը, փշաստանի վերածած է անոնց հիւանդ հոգիները եւ փակեր է անոնց ներքին տեսողութիւնը, որ երկինքը չտեսնեն:

Ներկայ սանձարձակ ու շփոթ ժամանակներուն՝ բարեպաշտ մարդն անգամ չի կրնար հոգին անարատ պահել մեղքին խայթերէն: Սուտը ատելով հանդերձ, անբաժան կը պահէ զայն իր անիրաւ գործառնութիւններու միջամտութենէն:

Երբ մարդը կը մերժէ ընդունիլ հաւատքին սերմերը իր հոգիին արգաւանդ հողերուն վրայ, կը կերտէ իր մէջ, ոչ թէ բարեպաշտ անձնաւորութիւնը, այլ՝ բարբառու մարդը:

Աստուծոյ խօսքին գորութիւնը կը տկարանայ, մարդուն բարացուցած տկարութեանէն եւ կը ճառագայթէ ու կը պողպատի իր ջերմին բարեպաշտութենէն:

Հազար անգամ նախընտրելի է, որ ուսանողի մը գլուխը յորդի ծանօթութիւններէ, քան թէ գիտելիքներու խճողումէն՝ հոգին մթազնի անբարշտութենէն:

Ժողովրդային իմաստութիւնը կ'ըսէ, ինչ որ կ'ընես ուրիշին լաւ

Մար.ք էջ 18



Slim-Band Weight Loss Centers

David G. Davtyan M.D., FACS, FICS

Եթէ ուզում եք նիհարել արագ եւ ընդմիջտ եւ նորից լինել առողջ եւ գեղեցիկ, Վիրաբոյժ Դավիթ Դաւթեանի կենտրոնը առաջարկում է անվտանգ եւ ապահով նիհարելու լաւագոյն միջոցը:

“LAP-BAND”

2001 թուականից մեր փորձառու եւ նուիրուած անձնակազմը օգնել է հարիւրաւոր հայերի եւ ամերիկացիների նիհարել եւ վերադարձնել իրենց գեղեցկութիւնը, առողջութիւնը եւ երջանկութիւնը:



DAVID G. DAVTYAN M.D., FACS, FICS

- American Board of Surgery
American Board of Bariatric Medicine
Fellow American College of Surgeons
Fellow International College of Surgeons
American Society of Bariatric Physicians
American Society for Bariatric Surgeons
American Society of Breast Surgeons
American Society of Clinical Oncology
American Society of Surgical Oncology
European Society of Surgical Oncology

- GLENDALE
BEVERLY HILLS
ORANGE COUNTY

We offer attractive financing. LAP-BAND is now approved by Blue Cross. Medicare and other insurance companies

GLENDALE (818) 546-1500
www.LapBandLa.com

- We also specialize in treatment of:
CANCER and diseases of
- Breast
- Colon
- Stomach
- Liver, Pancreas
- Gall Bladder

ԶԵՆՈՒԳԻՐ ՄԸ ԵՒ ՇՆԱՏԻՊ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ 18-ՐԴ ԵՒ 19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒ ԳԻՐՔԵՐ

ԴՈՎՏ. Տ. ԶԱԻՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Յիսնամեակ մը անցած է արդէն ու մեր անճնական գրադարանին մէջ հայերէն ձեռագիր մը եւ 28 հնատիպ հայերէն գիրքեր ի պահ կը մնան, տպագրուած վաղարշապատ, Երուսաղէմ, Կ. Պոլիս եւ Վենետիկ, որոնք իրենց հնութեամբ եւ բովանդակութեամբ պատմական կարելոր արժէք կը ներկայացնեն: Անոնց մէջ կան պատմագրութիւններ, մեկնութիւններ, շարակնոց, հաւատոյ ու Ս. Գիրքի վերաբերեալ դասագրքեր, բոլորն ալ իրենց իսկական կազմով, կաշեպատ կամ թղթակազմ: զանոնք ստորեւ կը ցուցակագրենք թուականի կարգով, տալով մասն իւրաքանչիւրին հրատարակութեան յատուկ պարագաներն ամփոփ տողերով, ինչպէս մասն Յիշատակարաններ՝ ուր որ կան:

ԶԵՆՈՒԳԻՐ ՄԱՇՏՈՅ

Կաշեպատ ձեռագիրս Ծիսարան-Մաշտոցի ննջեցեալներու յուղարկաւորութեան եւ թաղման կարգերը կը բովանդակէ: Անթուակիր եւ սակայն հաւանաբար 18րդ դարուն գրուած: 102 թերթ՝ բոլորգիր, մաքուր եւ լաւ ընթեռնելի, մէջ ընդ մէջ՝ կարմիր թանաքով: Սկիզբէն թերթեր ինկած են իսկ վերջաւորութիւնը՝ անաղարտ: Կ'աւարտի «Տրտմահադորդ», «Ձարհուրեցան», «Ուրախացան», «Աղաչանօք» ննջեցեալներու յատուկ երգերով: Յիշատակարան չունի:

1737 թ. (359 էջ)

ՅԱՃԱՆԱՊԱՏՈՒՄ

«Գիրք որ կոչի Յաճախապատում, ասացեալ Սբ. Հորն մերոյ երանելուն Գրիգորի Լուսաւորիչին, յորում պարունակին ճառք Յոգնապատումք Քսաներէք: Վասն անհաս էութեան Աստուծոյ, եւ ինամոցն եւ սիրոցն որ առ ստեղծուածս: Եւ վարուց ուղղութեան եւ հատուցման գործոց»: Կ. Պոլիս 1937 ՌՃԶԶ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

էջ 357

«Ձաշխատող ցանկիս եւ սրբագրող սբ Մատենիս. զՊաղտասար չնչին ծառայս ձեր ով հոգեսէր ընթերցողք, հանդերձ իմովք եւ ննջեցելովք յիշեսձիք ի Տէր, եւ ողջ լերուք»:

Յայտարարութիւն ինչ Յաղագս Հոգելից Սրբոյ Մատենիս «Եւ ահա զայս հոգեւոր ճանապարհի ընթացութիւն՝ այս գիրք այնքան լիով ուսուցանէ, մինչ գի գմտաւոր հետեւողան իւր՝ ի կաճառս անմարմնոց իբր գձեռանէ առեալ վերացուցանէ ի գմայլումն սիրոյ ամենասուրբ Երրորդութեան: Իսկ որք բաց ի հոգեւորէն այլ ինչ իմաստ նուրբ որոնեն ի սմա՝ է նոցին սա իբր անպիտան եւ անօգուտ: Այլ որք ունին գհոգին Քրիստոսի՝ գմարգարտան անգին, գմանանայն ծածկեալ, եւ զգանձն թաքուցեալ չազարակի՝ գտանեն ի

սամ որ է արքայութիւն երկնից, գորմէ ի ներքս ի ձեզ է ասատ Տէր մեր»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

էջ 359

«Եւ սոյն այս գեղեցիկ աստուածային գանցուս՝ ցանկացող եղեալ բարեպաշտուն եւ հոգեսէր մահտեսի Յակոբ ամուճայն որ է հաւատարիմ պաշտօնատար եւ միաբան ի դուռն սրբոյն Յակոբայ՝ մեծի թողոցն ի սուրբն Սաղիմ: Եւ իւր արդեամբն ետ տպել գաս ի յիշատակ բարի հոգուոյ իւրոյ, ի յօգուտ հոգեւոր եղբարց, եւ ի պատիւ ի փառս միոյն Աստուծոյ»:

«Եւ արդ, ողորմութեամբն Աստուծոյ եւ բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ գորավարին, տպեցեալ աւարտեցաւ սուրբ գիրքս ի թվին հայոց ոճձգ (1186)551=1737) Մայիսի 20, ի Հայրապետութեան սրբոյն էջմիածնի Թեքիրատաղցի Տեառն Աբրահամու Սրբազան կաթողիկոսին Ամենայն Հայոց: Եւ ի պատրիարքութեան սրբոյն Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Տեառն Գրիգոր եւ Տեառն Յովհաննու սրբազան եւ աստուածաբան վարդապետացն: Ի տպարանի Կարապետի որդուոյ Մահտեսի Աստուածատուրին եւ որդուոյն նորին տիրացու Յօհաննէսին, ի Կ. Պոլիս քաղաքի»:

«Նաեւ սուրբ էջմիածնի նուիրակ Պետրոս աստուածաբան վարդապետն յիշեսցի ի բարին, զի նա ետ գորինակն սորին եւ յոյժ փափաքանօք կամեցաւ գտպելն»:

1750 թ. (591 էջ)

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Ըստ անստերիւր եւ անսայթազ վարդապետութեան Սրբոյն Թովմայի Բաժանեալ ի չորս հատորս գոր արարեալ է Հօր Անտոնի Կովղոյ Լէմովկեցու աստուածաբան

վարդապետի Փարէս քաղաքի Հատոր Երկրորդ: (Կաշեկազմ) Թարգմանեալ զգուշութեամբ ըստ հայկազեան լեզուիս ի Հայր Վրթանէս վարդապետէ Կ. Պոլսեցու՝ յաշակերտէ Մխիթարայ վար-

դապետի, մեծի Աբբայի: Եւ տպագրեալ հրամանաւ Ստեփաննոսի վարդապետի եւ Աբբայի նորին յաջորդի:

Ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու հայոց կաթողիկոսի, յամի Տեառն 1750, ի թիվ հայոց ՌՃՂԹ, ի Վենետիկ, ի տպարանի Որլանտեան Ստեփաննոսի, հրամանաւ մեծաւորաց:

1750 թ. (686 էջ)

ՆՈՅՆ ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ,

(Հարունակութիւն, կաշեկազմ):

1790 թ. (832 էջ)

ԶԵՆՈՒՅ ՇԱՐԱԿԱՆ

կաշեկազմ

Տպեցեալ ի Վեհափառ Հայրապետութեան Գերագահ Աթոռոցն Սրբոյ էջմիածնի Տեառն Ղուկասու Սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Յովակիմայ Երջանկափայլ վարդապետի:

Վեհափառ հրամանաւ Մեծի Արքայանիստ Մայրաքաղաքիս Կ. Պոլսոյ, Սրբազան Արհիեպիկոպոսի Տեառն Ջաքարիա Ազգասէր կարդացեալ աստուածաբան պատրիարգի: Ի թուին հայոց ՌՄԼԹ, նոյեմբեր ժա (11), ի տպարանի Յովհաննիսի եւ Պօղոսի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏՊՈՂԻ

«Օրհնութիւն, գոհութիւն եւ պաշտօն հանդերձ երկրպագութեամբ եւ մաղթանօք արագահաս վկային իւրոյ սրբոյն Մինասա՝ ետ կարողութիւն եւ յաջողութիւն մեզ նուաստիցս հասուցանել ի կատար եւ ի լոյս ածել գհոգեւոր երգս երաժշտական, այսինքն՝ գճարականս զայս վայելուչ, ի վայելումն մաքուր մանկանց նորոյ սիօնի:

Զի որպէս անկարօտն փառաց Աստուած կարգեաց ի յերկինս ի

վերինն Սիօն գիմանալի էութիւնս մշտանուագ երգով օրհնաբանս ի պաշտօն իւրոյ մեծութեան ըստ տեսութեան Եսայեայ: Այսպէս հաճեցան եւ յերկրի կարգել օրհնագուս ինքեան զբանականս զայս սեռ, զի ի ձեռն սուրբ եւ քաղցր երգոցն՝ գնմանութիւն նոցին յինքեանս բերելով միշտ՝ նոցա նմանեցին:

Արդ՝ ի հրճուիլն ձեր մինչ գմայլիք սովաւ, եւ հետեւապէս զկաթուածս ինչ արտօսից առ բերէք յաչաց ձերոց՝ շարժեալ ի յըզակրութենէ ներքին հոգուոյ՝ յիշեսձիք ի Քրիստոս յոյան մեր բնաւից, զհանգուցեալ հայրն իմ գմահտեսի Աստուածատուրն եւ զիս գորդի նորին զՅօհաննէս, հանդերձ բարեջան եւ բազմաշխատ որդուովն իմով տիրացու Պօղոսի եւ միւս որդուով տիրացու Յարութիւնիւ՝ որ շարեաց զգիրս կապարեայս:

Նաեւ յիշել մաղթեմ զաշխատաւորն գործարանիս մերոյ՝ բաւլուցի Տիրատուրի որդի գտիրացու Ջաքարն եւ զայլս: (էջ 831-832):

1807 թ. (86 էջ)

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ

ՕՁՆԵՑԻՈՅ ՃԱՌ ԸՆԴԴԷՄ

ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆԱՅ

Նախ զառաջինն ի լոյս ընծայեալ սովին տպագրութեամբ ըստ հին օրինակին եղելոյ ի մեծ գրատան Փարիզու:

Հանդերձ յառաջաբան եւ հետեւորդ ծանօթութեամբ

Հ. Մկրտիչ վարդապետի Աւգերեան, ի միաբանութենէ ամենապետիւ Տեառն Մխիթարայ մեծի Աբբայի:

Հրամանաւ գերյարգոյ Տեառն Ստեփաննոսի Աբբայի եւ Աստուածապատիւ

(Շարունակելի)

HARUT DER-TAVITIAN
License #0B28270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201

Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excelhye.com
www.excelhye.com

EXCEL
HYE INSURANCE SERVICES

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

PIACCI UOMO
Men & Boys Suit Outlet

GRAND OPENING

Inglewood Crenshaw Plaza

3 Suit Special

20% - 70% OFF
JUST IN TIME FOR EASTER

for \$249⁹⁹ Reg. \$899⁹⁹
* with this ad only

3 • Tailored Suits
3 • Dress Shirts
3 • Silk Ties
3 • Silk Hankies
3 • Belts
3 • Pair of Socks

Boy's Suit Package
1 • Tailored Suit
1 • Dress Shirt
1 • Tie
1 • Hankie
1 • Belt
1 • Pair of Socks
\$69⁹⁹
* with this ad only

FREE Silk Tie Set
with any purchase * with this ad only

PIACCI UOMO
2646 W. IMPERIAL HWY
INGLEWOOD, CA 90303
(Next to M&M Soul Food)
323-755-3300

OPEN 10AM - 7PM MON - SAT • SUNDAY BY APPOINTMENT

ԵՐՈՒՍԱԴԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻԻՆԸ ԼՈՒՍԱԿՈՐԵԱՅԻ ՀԱՆԴԵՍԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնն ու հայ համայնքը կը պատրաստուին Աւագ Շաբթուան եւ Լուսաւորեացի (Լոյսի) Հանդէսին, որ տեղի պիտի ունենայ ձրագալոյցի օրը, Շաբաթ, Ապրիլ 7ին, 2007 Սուրբ Յարութեան Տաճարէն ներս գտնուող Յիսուսի Սուրբ Գերեզմանին մէջ: Պատրիարքութիւնը ձեր գորակցութեան կողմէն կ'ուղղէ, որպէսզի իր դարաւոր իրաւունքները պահպանուին եւ պաշտպանուին Երուսաղէմի մէջ:



2003 թուին Յոյն Օրթոտոքս Եկեղեցուց եւ անոր Պատրիարքին կողմէ դժուարութիւն ստեղծուեցաւ Լուսաւորեացի Հանդէսի շուրջ: Անոնք շեղում մը պահանջեցին դարերէ ի վեր կատարուած եւ ընդունուած աւանդութենէն, որ իրաւունք կու տայ Հայոց Պատրիարքին եւ կամ անոր ներկայացուցիչ հոգեւորականին՝ Յունաց Պատրիարքին հետ մտնելու Սուրբ Գերեզման: Վերոյիշեալ թուականէն ի վեր իսրայէլի Կառավարութեան հետ, ինչպէս նաեւ կատարուած օրինական միջոցները, մասնագիտական վկայութիւնները եւ փաստերը եւ Յունաց Պատրիարքութեան հետ կատարուած բանակցութիւնը տակաւին չեն յանգած յստակ որոշման: Երուսաղէմի Սրբավայրերուն աւանդութիւնները գոյութիւն ունեցած են հարիւրաւոր տարիներ եւ գործադրուած են նաեւ Օսմանեան շրջանին եւ հարազատութեամբ գործադրուած են նաեւ Յորդանանեան Կառավարութեան տարիներուն:

Պատրիարքութեան կողմէն է համայն հայութեան, որ հայորդիներ իրենց կողմէ եւ կամ իրենց կազմակերպութիւններու անունով իսրայէլի Կառավարութեան Նախարարներուն եւ կամ տեղական իսրայէլի Դեսպանատներուն կամ Հիւպատոսարաններուն ի-մէջ ընեն եւ կամ ֆէքս ընեն ստորեւ տպուած նշուող նամակի նման գրութիւն մը, ինդրելով որ Ապրիլ 7ի Լուսաւորեացի Հանդէսէն առաջ լուծուի այս շատ կենսական հարցը, որպէսզի Երուսաղէմի մէջ դարերով աւանդութիւն դարձած Հայոց Պատրիարքութեան իրաւունքները պահպանուին եւ շարունակուին:

Ձեր գորակցութիւնն ու մասնակցութիւնը հոգեւոր եւ ազգային այս իրաւունքի վերաբերեալ չափազանց կարեւոր եւ անհրաժեշտ է:

The following letter can be faxed or used to draft your e-mail to the following officials:

- Mr. Ehud Olmert, Prime Minister Fax:(9722) 670-5475
E-mail PMO.HEB@it.pmo.gov.il
 - Mrs. Zippi Livni, Minister of Foreign Affairs Fax:(9722) 628-5438
 - Mr. Avi Dichter, Interior Security Minister Fax:(9722) 542-8039
 - Prof. Daniel Friedman, Minister of Justice Fax: (9722) 628-7757
E-mail:mancal@justice.gov.il
 - Mr. M. Mazooz, Attorney General
Fax: (9722) 646-7001
 - Mr. R. Baron, Interior Minister Fax: (9722) 566-6376
E-mail: SAR@moin.gov.il
 - Sallai Meridor, Israeli Ambassador to America Fax: (202) 364-5423
E-mail Interreligious@israeemb.org
- You can also locate your local Israeli Consulate by going on-line to:
www.israeemb.org
To fax to Israel, dial 011 then the number provided

Date:
TO THE REPRESENTATIVES OF THE ISRAELI GOVERNMENT:

Since 2003, there has been conflict between the Armenian Orthodox and the Greek Orthodox Patriarchates over the Holy Fire Ceremony held in the Church of the Holy Sepulchre on Holy Saturday of Easter Week. The Greek Patriarchate demanded a deviation from the Status Quo procedures that gives the Armenian Patriarch of Jerusalem or his representative the right to enter the Holy Tomb together. Appeals to the Israeli Government since that time, including legal recourse, the rendering of expert testimony and evidence, and negotiation with the Greek Orthodox Church have not produced a clear decision. The Status Quo procedures for the Holy Places have been in existence for hundreds of years and are anchored in the Ottoman period.

This year, the Holy Fire Ceremony in the Church of the Holy Sepulchre is on April 7, 2007, I urge the Israeli Government to expeditiously restore the centuries-old Status Quo rights of the Armenian Patriarchate of Jerusalem as it was prior to 2003.

Name:
Address:
Contact info:

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

www.massisweekly.com



Wahib

Wahib's

MIDDLE EAST RESTAURANT

الشرق مطعم

MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL(626) 795-4493

ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԳԱՂԱՓԱՐԻ ԸՆՏՔԵՐՈՎ

Շարունակում էք 13-ին

ստորագրելու համար: Գիշերուկայ ժամը 12ին երեք գինուորներ եկան պաշտօնեային գեկուցեցին իմ անմեղութեան մասին, պաշտօնեան ինձ դիմելով կը ներես տղայ ճանքեզ սխալ մարդու տեղ են բերել եւ ազատ արձակեցին ինձ: Վախով դողով իջալ ատիճաններից գիշերուկայ մուտքի մէջ քալելով թրանուկայ փառքից մինչեւ Արաբկիր տուն հասալ ժամը 1ին ծնողներս ինձ էին սպասում չի գիտէին ուր եմ գտնուում, հայրս ըսաւ երեք հոգի եկան գինուորներ մեզ հարցաքննեցին զաւակներդ ինչով էին գբաղուում արտասահմանում, նոյնը պատասխանել հայրս սկաուտներ էին ոչ մի կուսակցութեան չէին պատկանում Հայ Մարմնամարզական Միութեան մէջ էին:

Մինչեւ 1955 թուականը դեր Ստալինեան վախը գոյութիւն ունէր, հայրենադաճների մեծ մասը աշխատում էին շինարարութեան մէջ որպէսզի Երեւանը բարգաւաճի եւ այնքանից չետոյ բնիկ տեղացի ժողովուրդը մեզ լաւ չի ընդունեցին իրենց տանը, ածական անուններ տալով թուրքի մնացորդներ ձեր տեղը քարածուխ բերէին, ձեզ կարմիր ինձոր ուղարկեցինք որ եկաք, մենք լաւ չենք սպրում եկաք մեր հացն ալ կտրեցիք, հիասթափութիւնը գնալով շատանում էր, բայց ոչ մի հայրենադարձ ճառ չունեք քանի որ տունը տեղը ծախած Հայրենիքի կարօտի համար ներգաղթեցին Հայաստան, 1949 թուականին բաւականին հայեր աքորեցին Սիւպիր Ալթասկիկրայ կային նաեւ հայրենադարձներ որոնք Սիւպիրից չվերադարձան եւ մահացան:

1953ին Ստալինը մահացաւ, բոլոր ժողովուրդը սուգի մէջ էր, շէնքերի վերելից ցած սեւ կտորներ իջեցրած, փողոցներում շատ քիչ մարդիկ էին երեւում, մեծահասակ կիները լացում էին, դուրսից տուն մտալ տեսնեմ մայրս լացում էր, մամա ինչու ես լացում, տղաս Ստալին պապանիս մահացաւ, հոգին լուսաւորէ մայրիկ բոլորնիս ժամանակը որ հասուննալ պիտի մահանանք, պատերազմը վերջացել էր հացի նեղութիւն կար, հայրենադարձների մեծ մասը իրենց ունեցուածքը սկսան ծախել սեւ շուկայում, մինչեւ իսկ նորահարսերը իրենց ունեցած բաժինը սկսան վաճառել փողոց հաց գնելու համար: 1955ին վախի կերպարանքից դուրս գալու համար, դիմեցի Սան Լոյս Տան Միւսուրման նախարարին, ինձ թոյլատրելու կազմակերպել Արաբկիր Սպանդարեան շրջանի կարմիր խաչը եւ ինձ նշանակեցին կարմիր խաչի նախագահ, բաւականին հայրենադարձների աղջիկներ, տիկիններ 18ից մինչեւ 25 տարեկան ընդարկուցին կարմիր խաչի կազմակերպութեան մէջ, պայմանով տարեկերջը կէս թոննա քարածուխ տրամադրուի ձմեռը վարելու համար, նաեւ չունեւորներին հագուստով ապահովել: 40ից աւելի աղջիկներ կոչուում էին տրուստներ թեւերնին կապած կարմիր խաչը եւ ապահովագրութեան կարմիր խաչի գրքով, հիւանդանոցի սրահին մէջ բոլորին հաւաքեցի, հրաւիրեցի հիւանդանոցի Ներսէսեան Աղուան բժիշկի, եւ Յրդ պոլիգլիկայի վասիլեան գլխաւոր բժիշկի մեզ օգտակար ըլլալու համար: Առաջին հերթին Արաբկիր շրջանի աղբերը վերացնել, բոլոր տունների եղած աղբերի տեղերում դեղեր ցանել,

արնետների եւ մուկերի վերացնելու համար բոլոր տունները ստուգել հիւանդներ եթէ կան հիւանդանոց տեղափոխել, բոլոր տրուստին աղջիկները շաբաթը երկու անգամ դասընթացներ պէտք է անցկացնէին առաջին օգնութեան նշանները սովորելու համար եւ շաբաթը մէկ անգամ գինավարժական մարզումներ պէտք է կատարեն, ամիսը մէկ անգամ լեռան բարձունքին փորձութիւններ եւ մարզումներով պէտք է գբաղուին, հագնուած լինելով գոմպիլեզոն եւ երեսի մասկայով թեւերնին կապած կարմիր խաչը, աթոմ ուումբի դէպքում պաշտպանուելու, ժողովուրդին օգնութեան համելու մեղմելու համար, բոլոր հայրենադարձների աղջիկները կամաւոր կերպով կատարեցին իրենց պարտականութիւնները երկու տարուկայ մէջ, հիւանդանոցի հանդերձարահում Երեւանի բոլոր բժիշկները հաւաքուել էին, շնորհակալութիւն յայտնեցին, յանձնեցին պատուոգիրներ, եւ ինձ հրաւիրեցին բեմահարթակ, իմ ելոյթս եղաւ կամաւոր կերպով աշխատեցինք մեր Հայրենիքի մաքրութեան փառք Աստուծոյ աղբերը մաքրուեց եւ արնետները վրեցան, բաւականին հիւանդներ բուժուեցին շնորհիւ բժիշկ Աղուան Ներսէսեանին եւ գլխաւոր բժիշկ Վասիլեանին, բոլոր բժիշկները սկսան ծափահարել ինձ պարգեւատրեցին շքանշանով, կարմիր խաչի, եւ պատուոգիրով մէջը գրուած շնորհակալի խօսքերով, 3 տարի շարունակ աշխատեցինք, աղջիկների մի մասը մտաւ հիւանդանոց բուժքոյր աշխատելու, իսկ մի մասն ալ ընդունուեց բժշկագիտութեան համալսարան, այս գրութիւնը կարդացող տիկիններից շատերը ներկան 70ից 75 տարեկան պիտի լինեն եւ կը յիշեն իրենց անցեալը, մենք հայրենադարձները կարողացանք ապացուցել մեր աշխատանքով կառուցելու մայր Հայրենիքը, ես որոշեցի նոյնպէս աշխատել շինարարութեան վրայ, ընդունուեցի երրորդ շին տրեստի երկաթ բեթոնէ գործարանում, 2 տարի անց գլխաւոր էնժեներ տեսնելով իմ ընդունակութիւնը 1 տարիով ուղարկեց փորձնական լաբորատորիա աւելի կատարելագործելու համար, ցորեկները աշխատում էի իրիկունները սովորում, երբ վերջացրի մէկ տարին, ինձ ուղարկեցին Մոսկուա 6 ամիսով ծանօթանալու կոնստրուցիաների հետ, շուտով գնացքով վերադարձալ Երեւան իմ աշխատանքը շարունակելու, ինձ ուղարկեցին չարբախի աւելի մեծ երկաթ բեթոնէ գործարան կառուցելու բարձր յարկանի շէնքերի համար, Երեւանը սկսաւ բարգաւաճիլ բարձր յարկանի շէնքերով, ես հիւանդ էի տեսնելով շէնքերի գեղեցկութեան քանի որ երկաթէ բոլոր կոնստրուցիաները ստուգում էի գծագիրներով որպէսզի աշխատողները իրաւունք ունենան բեթոնը թափելու կաղապարների մէջ իմ աշխատանքի շնորհիւ Գերագոյն Սովետը պարգեւատրեց աշխատանքի շքանշանով, որոշ ժամանակ անց նորից պարգեւատրեցին վեթերանի շքանշանով եւ պատուոյ գիրով, նոյն գործարանում աշխատեցի 24 տարի, բոլոր կողմերը երեւում էին բարձր յարկանի շէնքերը տարբեր գեղեցկութեան նաեւ սկսաւ բարելաւել սպրեյակերպը, բաւականի օրէնքները սկսան փոխուել, արհեստանոցները սկսան աշխատիլ տուններում մէջ իրենց մասնագիտութեան:

1965 թուականին թուրիստական ճանապարհը բացուեց, ժողո-

վուրդը սկսաւ մեկնել Պէյրութ իրենց բարեկամների մօտ հետերնին տանելով որոշ ապրանքներ վաճարելու, վերադարձին նոյնպէս բերում էին բաւականին ապրանքներ վաճարելու համար, քարաքի հետ միատեղ սկսաւ գարգանալ ժողովուրդը, որոշ ընտանիքներ սկսան լքել մայր Հայրենիքը Պէյրութից Անչալի միջոցով հիմնական մեկնում էին Իտալիա մի քանի օր մնալով դէպի Ամերիկա, ես սկսալ ատելութեամբ նայիլ մեկնողներին քանի որ Հայաստանը սկսաւ բարգաւաճիլ դէպի լաւը, երբ հարցրեցի մի քանի ծանօթ ընտանիքների պատճառը ինչու է ձեր մեկնելը, պատասխանեցին օրէնքներից հիասթափուեցինք ոչ թէ Հայրենիքից եւ արտագաղթը գնալով շատանում էր դէպի Ամերիկա ովքեր բարեկամներ ունէին, փաստաբանների միջոցով թուրթեր էին լրացնում բերել տալու իրենց հարազատներին:

1973 թուականին ես ալ մեկնեցի Պէյրութ բարեկամներից մօտ, երբ օդանաւը վայրէջք կատարեց մեզ բոլոր տարին մեծ սրահը, բեռնակիրներ հերթական կարգով տանում էին ստուգիչներու մօտ ստուգելու համար, բոլորից վերջում նստած սպասում էի բեռնակիրը մօտիկանալ իմ ապրանքները դուրս հանելու ապակիի դուրսից Հնչակեան կուսակցութեան տղաները թեւերնին թափահարում էին, սրահի մէջից մի երիտասարդ մօտեցաւ փաթաթուեց սկսաւ համբուրել, հեռուից ճանաչել ինձ, ժամանակին ինձ մօտ եղել է Հ.Մ.Մ.ի սկաուտ 45 տարեկան էր բոլոր ստուգիչների ղեկավար, բեռնակիրին կանչեց իմ ապրանքը դրեց կարգի վրայ եւ առանց ստուգելու դուրս հանեց, բոլոր տղաները բարի գալուստ մաղեցին օթոներով տարին ինձ գերիլիս կակոսեանների տուն, հագիւ երկու ժամ էր անցել կարօտնիս չաւած Գրիգոր Տիրատուրեանը իմ բապետական հագուստով քովը երկու սկաուտներով, եկան ինձ տարին աղումբ, բաւականին սկաուտներ, գայլիկներ, արեւուշներ հաւաքուել են ինձ էին սպասում, սկաուտների մեծ մասը իմ ժամանակուայ սկաուտների գաւակներն են, բաւականին հարցազրոյցներ ունեցանք եւ հրաւիրեցին աղումբի երկրորդ յարկը, նստած էին 60ից աւելի Հնչակեան կուսակցութեան անդամներ, բոլոր յարգանքի համար ոտքի կանգնեցին, սկսալ բոլորին հետ ձեռնուել իրենց անունները տալով ժամանակին ինձ մօտ եղել են սկաուտներ, գայլիկներ եւ երէցներ մի քանիսին կրցալ ճանչնալ քանի որ ամէն մէկի տարիքը 40ից 45 տարեկան էին, Մեւրթոն Սեֆերեանը ատենապետն էր, իր աթոռը գիջեց ինձ, օրուայ օրակարգն էր բոլոր Հնչակեան կուսակցութեան երիտասարդները պէտք է պաշտպանէին Պէյրութի հայկական թաղամասերը, քանի որ քաղաքի վտանգ էր սպառնում Իսրայէլ եւ Պաղեստինի միջեւ, ես որքան ուրախ էի քանի որ 26 տարի անց գրկախառնուեցի իմ հարազատ ընտանիքի հետ գոհունակութեամբ յիշելով ցոյց տրուած վերաբերմունքի Հնչակեան կուսակցութեան անդամների կողմից: Երբ վերջացաւ օրս, վերադարձալ Երեւան, շատ տխրալի երեւոյթ էր, արտագաղթը գնալով շատանում էր, Հովիրի առաջ հերթեր էր գոյանում, Հովիրի պետ Շեկոյեանը ատելութեամբ էր նայում գնացողներին ըսելով ձեր բոլոր երախտները փճանալու են Ամերիկայում, Հայաստանի կառավարութիւնը որոշում կայացրեց յանձնախումբ ստեղծել գնացողներին տունները այցելել իմանա-

լու պատճառը ինչու է, բոլոր մարդիկ ներկան բարեկեցիկ կեանքով են ապրում, բոլոր պատասխանները մէկն էր, հարազատնիս գնացել են մենք ալ պէտք է գնանք, արդեօք ճշմարտութիւնը ամօթ էին համարում, եթէ որ Ամերիկան թոշակ չի վճարէ եւ երեխաներին վեթերով չի ապահովէ, ոչ մէկը իրեն տունը տեղը ունեցուածքը չէր ծախել իր Հայրենիքը թողած մեկնելու Միացեալ Նահանգներ, Ամերիկան մի երկիր է կաթսայի մէջ խառնարան, բոլոր կեանքով դ պիտի աշխատիս կառավարութեան տուրքերը վճարուելու, երբ ծերանաս ոչ մէկը տէրութիւն չի անելու, տանելու են կամ ծերանոց եւ կամ գիժանոց, արտագաղթը բաժանուած է երկու մասի, ովքեր ընտանիք չունին մեկնում են Ռուսաստան աշխատելու համար, իսկ ովքեր ընտանիք ունեն մեկնում են Ամերիկա, քանի որ կառավարութիւնը ապահովում է գնացող մարդկանց, արտագաղթի շնորհիւ շատ մարդիկ հարստացան, երբ տունները սկսան ծախել կաշառք էին տալիս Հովիրին գործերը շուտ վերջացնելու համար, սուտից թերութիւն էին գտնում գործը երկարացնելու, նաեւ կաշառք էին տալիս խանութներից տակից շատ ապրանք ստանալու համար, իսկ տոմսարկղի համար օրեր շարունակ հերթ պիտի կանխիս ներքին կարգով օդանաւի տոմսերը ստանալու համար, կաշառքը բոլոր տեղերում իր չափը սահմանը անցել էր, երբ Ամերիկա էին հասնում նորից գերոյից էին սկսում, բոլոր գնացողների մեծ մասը արհեստանոցներ, մտաւորականներ, մշակույթով գբաղուող մարդիկ էին, եւ այսպէս անցնում էր տարիներ դէպի լաւը, նորից Հայաստանը խառնաշփոթ վիճակի մէջ ինչու Լարաբաղեան պատճառով, շատ մարդիկ մինչեւ օրս չեն գիտեր ինչպէս սկսաւ Լարաբաղեան շարժումը:

1988 Փետրուար 19ին ես աւթօպիւսով Արաբկիրից իջնում էի դէպի Օփերայի հրապարակ, Բարեկամութեան փողոցի վրայ է գտնուում չեկայի շէնքը բոլոր երկաթէ ճաղերով շրջապատուած, աւթօպիւսը կանգնեց, փողոցի լայնքով 300 հոգիից աւելի ժողովուրդ էր հաւաքուած, իջալ ցած իմանալու համար ինչի մասին է, բարձրախօսը ձեռքերնին պոռում էին լսելի դարձնելու ներսի ղեկավարներին, նրանք եկել էին Աբովեան քաղաքից իրենց գայրոյթը յայտնելու, Աբովեան Գործարանի տնօրէնը Թեւման Տէր Պետրոսեանը արգիլելով գործարանի կից քիմիական գործարան կառուցելու, կառավարութիւնը իրենց պաշտօնից ազատման հրաման է արձակել, քանի որ բանուորները շատ էին սիրում իրենց տնօրէնին բողոքի ցոյց էին կազմակերպել ցեկայի շէնքի առաջ, այդ ընթացքում Լարաբաղից եկած Սարուխանեանը ժողովուրդի մէջից անցնելով բարձրացաւ երկաթէ ճաղերի տակի պատի վրայ, սկսաւ իր ճառով ժողովուրդին հասկնել Լարաբաղում ագերիները իրենց մարդկանց են սպանում նետում են հայերի վրայ, եթէ մենք ըմբոստութիւն չհանենք Լարաբաղը կը հայաթափուի Նախիջեանի նման, եւ սկսաւ պոռալ «միացում միացում» եւ բոլոր ժողովուրդը մոռանալով իրենց գայրոյթի մասին սկսան պոռալ «պայքար պայքար մինչեւ վերջ», Սարուխանեանը յայտարարեց վաղը Փետրուար 20ին բոլորս Օփերայի հրապարակը պէտք է հաւաքուինք միութիւնը շարունակելու համար:

(Շարունակելի 1)

ՄԱՐԶԱԿԱՆ

Հ.Բ.Ը.Մ.-Ի ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ԼԻԿԱՅԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Մասնակցութեամբ բարձրագոյն դասակարգի տղամարդոց Հ.Բ.Ը.Մ.-ի չորս խումբերու, Հ.Մ.Մ. Փաստինայի եւ Հ.Մ.Մ. Կլէնտեյի մէկական խումբերու տեղի կունենան պասքէթպօլի հայկական լիկայի մրցումները: Առաջին երէք հանգրուաններուն արձանագրուած են հետեւեալ արդիւնքները:

Ա. Հանգրուան		Ընդհանուր դասաւորում	
Հ.Բ.Ը.Մ.-1 ընդ. Հ.Մ.Մ. (Կ)	84-48	Հ.Մ.Մ. (Փաստինայ)	2-1 +48
Հ.Բ.Ը.Մ.-2 ընդ. Հ.Մ.Մ. (Փ)	50-44	Հ.Բ.Ը.Մ.-1	2-1 +34
Հ.Բ.Ը.Մ.-3 ընդ. Հ.Բ.Ը.Մ.-4	72-56	Հ.Բ.Ը.Մ.-3	2-1 +16
Բ. Հանգրուան		Հ.Բ.Ը.Մ.-4	2-1 -7
Հ.Բ.Ը.Մ.-2 ընդ. Հ.Բ.Ը.Մ. (4)	56-60	Հ.Բ.Ը.Մ.-2	1-2 -1
Հ.Բ.Ը.Մ.-1 ընդ. Հ.Բ.Ը.Մ. (3)	63-58	Հ.Մ.Մ. (Կլէնտեյ)	0-3 -90
Հ.Մ.Մ. (Փ) ընդ. Հ.Մ.Մ. (Կ)	101-54		
Գ. Հանգրուան		<i>Յառաջիկային նախատեսուած է աղջիկներու եւ փոքր տարիքներու խումբերու մրցաշարք:</i>	
Հ.Բ.Ը.Մ.-1 ընդ. Հ.Մ.Մ. (Փ)	67-74		
Հ.Բ.Ը.Մ.-4 ընդ. Հ.Մ.Մ. (Կ)	58-53		
Հ.Բ.Ը.Մ.-3 ընդ. Հ.Բ.Ը.Մ.-2	59-54		

ԴՊՐՈՅՆԵՐԸ ԴԱՐՁԱԾ ԵՆ ԱՆԱՌԱԿԱՆՈՅ ԵՒ ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԱՐԲՆՈՅ

Շարունակուած էջ 14-էն

կամ վատ, դուն պիտի ըլլաս շահողը եւ տուժողը:

Անվատահոլութիւնը, կ'իշխէ մարդկային զգացումներուն վրայ՝ ապօրինի շահերու մրցակցութեան մէջ: Կը գտնուինք այնպիսի հանգրուանի վրայ, որ մարդոց խօսքերը եւ խոստումները անհաւատալի կը թուին: Պիտի բերդուիս՝ որ հաւատան, պիտի ստես՝ որ վատահոլ, պիտի շողոքորթես՝ որ բարեկամներ չահիս, պիտի կեղծես՝ որ յարգուիս, պիտի գովես՝ որ գովուիս, պիտի պատուես՝ որ պատուուիս:

Առանց փոխադարձ գովաբանութեան, մի սպասեր՝ որ գնահատուիս ու յարգուիս, պիտի սիրես՝ որ սիրուիս, պիտի ներես՝ որ ներուիս, պիտի շահեցնես՝ որ շահիս: Օրուան կարգախօսը այս կը պահանջէ քեզմէ: Ձեռն կրնար ուրիշներէն տարբեր ըլլալ, պիտի քալես բոլորի հետ համանոյն մեղքին ճանապարհէն, հակառակ պարագային, մինակ կը մնաս ու բարեկամներու սովէն կը տառապիս:

Միակողմանի մատուցում չկայ, իրար օգնութիւնը՝ երկուստեք պէտք է ըլլայ, որ յարաբերութեանց ներդաշնակութիւնը պահուի անարատ:

Եթէ նպատակդ է հարստանալ եւ երջանկութեան շողերու մէջ ըմբռնել անուշ կեանքին դառնահամ պտուղները, չես կրնար առանց մեղանչելու՝ այդ բաղձանքիդ պսակում տալ:

Յաջողելու եւ յառաջդիմելու գաղտնիքը տարբեր որակ ու վարկ ունի, գձուձ հաշիւներու մէջ առաքինութիւնը եւ ճշմարտութիւնը չեն զօրակցի ջանքերուդ:

Անիրաւ գործերու մէջ շահեր ապահովելու համար, պայման է, որ արժանապատուութիւնդ տակաւ անտեսես, խղճիդ ազդարարութիւնը:

ները չլսես, հոգիիդ պայծառ երկինքը մթազնես, ճշմարտութիւնը խեղաթիւրես եւ բոլորովին անգիտանաս Աստուծոյ գոյութիւնը, այն ատեն դուն ալ կը դատուիս Կրեստաներու շքանշանի մէջ ու կը փառաւորուիս:

Լոյսի ճամբաները, ուրկէ քալեցին հայ ժողովուրդին անմահ բարերարները, անոնց փառքը կը ճառագայթէ յաւերժութեան մէջ: Գոյութիւն ունին այսօր՝ լոկ քանի մը բազմաճառագայթ դէմքեր, որոնք կը յամենան տակաւին ծերութեան շողերուն մէջ շարունակական բազմգործութիւններով:

Այսօր, ամէն երկրի մէջ, մեր հայրենիքէն սկսեալ, ամօթը, մերկութիւնը, մեղքը ու ժգնօրէն կը ծափահարուին:

Նիւթապաշտութիւնը, մարմնապաշտութիւնը, շահափրութիւնը եւ ապօրինութեան բոլոր յոռեգոյն տեսակները հաւատքին զգացումը կը խեղդեն սուտ քարոզիչներուն մէջ:

Աշխարհը անառակներու բնակավայր դարձած է: Կոյր բախտին թողուած է առաջնորդութիւնը մարդկութեան ճակատագիրը:

Մարդուն կեանքը ապահով չէ, երկրի վրայ, ոչ մէկ տեղ, ոչ իսկ փականքուած տան մէջ: Անառակ Որդին, վաղնջական դարաշրջաններուն, երբ հօրը ժառանգը միսեց ցոփութեան մէջ անառակներու հետ, իր ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆ էր:

Երբ գոյաց ու բիւրեղացած հոգիով՝ վերադարձաւ հօրը տունը, իր ՅԱՂԹՈՒԹԻՒՆՆ էր:

Երէկ, Դիոգինէս փիլիսոփան՝ ցորեկ ատեն, լապտերը ձեռին, մարդ կը փնտռէր, որ առաքինութիւնը անձնաւորէր: Այսօր, եթէ բովանդակ աշխարհը ջահերով լուսաւորենք, պիտի չգտնեն անառակ մարդ մը, որ ազատագրէ հոգին մեղքին կապանքներէն, գոյաց ու վերադառնայ Աստուծուն:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳՆՈՒՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտպոլի առաջնութեան 30-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Մանչեսթըր Եուն. - Պոլքըն	4-1	Ռիսինկ - Փորթսմութ	0-0
Միտլըզպորո - Մանչեսթըր Սիթի	0-2	Ուիկան Աթլ. - Ֆուլհամ	0-0
Թոթեմհամ - Ուաթֆորտ	3-1	Պլեքպըրն - Ուեսթ Յամ	1-2
Չարլթըն - Նիլքէսթլ	2-0	Ասթոն Վիլլա - Լիվըրպոլ	0-0
Չելսի - Շեֆիլտ Եուն.	3-0	Էվըրթըն - Արսենալ	1-0

Առաջատար խումբերու դասաւորումը						
Մանչեսթըր Եունայթըտ	30	24	3	3	70-20	75
Չելսի	30	21	6	3	54-19	69
Արսենալ	29	16	7	6	51-24	55
Լիվըրպոլ	30	16	6	8	44-20	54
Պոլքըն	30	14	5	11	34-36	47
Էվըրթըն	30	12	10	9	39-28	46
Թոթեմհամ	30	13	6	11	43-44	45

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆուտպոլի առաջնութեան 26-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Հանովըր-96 - Համպուրկ	1-1	Վոլսպուրկ - ՎՖԼ Պոխում	3-1
Վարտըր Պոլտըն - ՖՍՎ Մայնց	2-0	Աախըն - Արմ. Պիլքֆելտ	2-0
Գերթա Պերլին - Քոպպիւս	0-1	Պ. Լիվըրքուզըն - Մեոնընկլատապիտ	1-0
Տորթմունտ - Նիւրնպըրկ	0-0	Շալքե-04 - Շթուքպարթ	1-0
Շալքե-04 - Շթուքպարթ	1-0	Այնթ. Ֆրանքֆորթ - Պայերն Միւնիխ	1-0

Առաջատար խումբերու դասաւորումը						
Շալքե-04	26	16	5	5	42-25	53
Վարտըր Պոլտըն	26	15	5	6	16-33	50
Շթուքպարթ	26	13	7	6	42-30	46
Պայերն Միւնիխ	26	13	5	8	39-31	44
Պ. Լիվըրքուզըն	26	11	6	9	40-35	39
Նիւրնպըրկ	26	8	14	4	38-24	38
Հանովըր-96	26	9	8	9	34-35	35

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտպոլի առաջնութեան 29-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Սոչո - Թուլուզ	4-2	Մոնպը - Նանթ	2-1
Լիլ - Լը Մանս	0-2	Սըտան - Պորսո	1-1
Վալանսիէ - Լորիան	0-0	Նանսի - Լիոն	0-3
Մարսէլ - Նիս	3-0	Օքսէ - Լանս	1-0
Սէնթ Էթիէն - Թրուա	3-1	Բընէ - Փարիզ Սէն ժերմէն	1-0

Առաջատար խումբերու դասաւորումը						
Լիոն	29	20	5	4	54-23	65
Լանս	29	13	10	6	41-30	49
Պորսո	29	13	5	11	31-31	44
Լիլ	29	11	10	8	35-23	43
Սոչո	29	11	10	8	35-34	43
Թուլուզ	29	12	7	10	30-32	43
Սէնթ Էթիէն	29	12	6	11	46-39	42

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուտպոլի առաջնութեան 28-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ա. Սէ. Միլան - Աթալանթա	1-0	Լացիո - Էմպոլի	3-1
Ֆիորենթինա - Ա. Էս. Ռոմա	0-0	Քաթանիա - Ռեճինա	1-4
Քալիարի - Քիեւո	0-2	Մեսինա - Թորինո	0-3
Ուտինէզէ - Լիվորնո	4-0	Սամոտրիա - Փալերմո	1-1
Փարմա - Սիենա	1-0	Ասքոլի - Ինթեր Միլան	1-2

Առաջատար խումբերու դասաւորումը						
Ինթեր Միլան	28	24	4	0	61-23	76
Ա. Էս. Ռոմա	28	17	7	4	55-22	58
Լացիո	28	15	7	6	47-22	52
Ֆիորենթինա	28	15	7	6	45-24	52
Ա. Սէ. Միլան	28	14	9	5	38-24	51
Փալերմո	29	13	8	8	43-34	47
Էմպոլի	27	11	9	7	27-24	42

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտպոլի առաջնութեան 27-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Վալենսիա - Ռասիկ	0-2	Էսփանիոլ - Լեվանթ	1-1
Մալորքա - Ռէալ Պաթիս	2-0	Ռէալ Մատրիտ - Կիմնասթիք	2-0
Յուլվա - Պարսելունա	0-4	Սարակոսա - Աթլէթ. Մատրիտ	1-0
Աթլէթ. Պիլյաո - Օսասունա	0-3	Տեփ. Քորունա - Կեթաֆէ	1-0
Վիլարեալ - Ռէալ Սոսիէտ	1-1	Սելիլա - Սելթա Վիկո	2-0

Առաջատար խումբերու դասաւորումը						
Պարսելունա	27	15	8	4	57-25	53
Սելիլա	27	16	5	6	48-24	53
Ռէալ Մատրիտ	27	14	6	7	37-24	48
Վալենսիա	27	14	5	8	37-26	47
Սարակոսա	27	13	7	7	40-27	46
Աթլէթ. Մատրիտ	27	12	7	8	32-23	43
Յուլվա	27	12	5	10	35-35	41

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ

(200 ԸՈԳԻՒ ՐԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՐԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA

ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School



HIGH SCHOOL OPEN HOUSE
2007-2008 ACADEMIC YEAR
Grades 9 - 12
WEDNESDAY, MARCH 28, 2007
AT 6:30 PM

Parents interested in enrolling their high school student are invited to join us to learn about our academic programs and educational opportunities available in an Armenian environment.

You will have a chance to meet with the faculty and administration, tour the campus, pick up an application, and speak with admissions officers.

AGBU HIGH SCHOOL - PASADENA
2945 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

For more information, please contact the school office at 626-794-0363.

AGBU GLENDALE PASADENA CHAPTER
YOGA YOGA YOGA YOGA

Come join us in a fun class guaranteed to challenge your mind and body!

Mariette is a certified hatha flow yoga instructor and a registered nurse who teaches yoga in the community and to healthcare professionals.

Yoga is a holistic practice which utilizes your body's own energy powerhouse to optimize wellness in the body and mind.

Yoga is neither a religion nor simply a "workout".

Classes starting March 26, 2007

LIMITED SPACES

For Information of reservations please call A.G.B.U. office (626) 794-7942

Հ.Բ.Ը.Մ.
ԱՐՏԱԲԱԶԳ
ԹԱՏԵՐԱՆՈՒՄԱԲԸ
Կը ներկայացնէ

*Արդարաւած
Էւանսկ Տըր*

Կարակերգութիւն 2 արարով

Հեղինակ՝ ԻՈՆ ԳԱՐԱԾԻԱԼԷ
Բենադրիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

Շաբաթ, Մարտ 17, 24, 31 ժամը 8:00-ին

Կիրակի, Մարտ 18, 25 ժամը 6:00-ին

Կիրակի, Ապրիլ 1, Օրէնճ Գառնթի

Tel. 714-898-9053 Tel. 949-786-0746

ՍՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ \$20

Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան Կեդրոնի - Արտասագի Թատերասրահ
2495 E. Mountain Street, Pasadena

Տոմսերը կարելի է սրանալ

• Հ.Բ.Ը.Մ. Գրասենեակ 626-794-7942

• Ապրիլ Գրատուն 818-243-4112 • Պերճ Գրատուն 818-244-3830

• Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան 818-883-2428



AGBU Asbeds

Cordially invite you to

An Evening with Scholars



PROFESSOR VAHAKN DADRIAN

"Historical Answers to Turkish Denials"

and

PROFESSOR TANER AKCAM

"Turko-Armenian Relations After Hrant Dink"

FRIDAY, APRIL 20th, 2007 – 8:00 PM

AGBU Manoogian-Demirdjian School

Aghajanian Hall

6844 Oakdale Ave., Canoga Park, CA

Reception will follow

FREE ADMISSION

For more information please call (626)794-7942

AGBU CENTENNIAL SPONSOR



Commerce Casino
LOS ANGELES



CROWNE PLAZA
HOTELS & RESORTS

6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com